

Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից և ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

ՊՆԻՔ ԱՌԻՅՆՈՒԹԱ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԸ ՆՈՐԿՈՒՄՆԸ ՈՒՆԵԱՆԱԸ, ՀԱՅԱՍՏԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆԱԿ
ԼՈՒՄՄԱՍՅԱՑՔԵՆԱԶԱՆԵԸ ԳՐՔԵՐ:

ԹԿՈՅՈՒՆ ԳՐՔԵՐԻ ՄՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԸ "ՀԱՄԱՀԱՅՐԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱԿԵՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՅՔԻՑ՝

www.freebooks.am

ԸՆԴՈՂՆԱԿԱԸ ԵՒՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՈՅՔԻՑ:
ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՒՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՆՑԱԿՆՈՒԹՅՈՒՆ:



ԳՐՔԻՔ ՄԵՁ՝ freebooks@rambler.ru




Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ
ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԻՄՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

**ՄՐՏԵՆԿԱՐԲԸՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԳԻՆ ԱՌՆՆԹԻՔԻ
ՄԱՆՍԱՅԻ ԱՆՈՒՆ ՀԻՆ ՉԵՌԿՐԵՐԻ ԲՆՍԻՏՈՒՄ**


**ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԻԾ
ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՐԱՄԱՍՏՁԵԼԻ ՄՐՏԵՆԿԱՐ**



**ՎՈՒԿՏԱԿԱՆ ԳՐԱՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ**

ՄՏԵՂԻ ԿԱՐԴԵՆՅԱՆ

ԲԻՆԿՈՒԹՅՈՒՆԸ
ՀՐԵ ԵՎ ՄԻՋՆԵՐԿՐԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



•ՍՈՒԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ՝ ՀՐԵՏԵՐԿՐԹՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ • 1982

Մատենաշարի խմբագրական մարմին
Ս. Ս. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ, Ն. Կ. ԹԱՀՄԻՋՅԱՆ,
Ա. Ս. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, Ա. Շ. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ,
Բ. Լ. ՉՈՒԳԱՍՋՅԱՆ (նախագահ)
Պատասխանատու խմբագիր՝
Լ. Ս. ԽԱՉԻԿՅԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ, Ս. Ա.

Վ 301 Բժշկությունը հին և միջնադարյան Հայաստանում / Պատ. խմբ՝ Լ. Ս. Խաչիկյան. — Եր.: Սովետ. գրող, 1982 — 60 էջ, 7 թ. նկ. — («Հայ մշակույթ» գիտա-հանրամատչելի մատենաշար) Մատենադարան, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Մաշտոցի անվ. հին ձեռագրերի ինստիտուտ):

Աշխատության մեջ լուսաբանված են հայ բժշկության պատմության հարցերը հնագույն ժամանակներից մինչև 18-րդ դարի վերջերը Հատուկ ուշադրություն է դարձված միջնադարյան ականավոր հայ բժիշկներ Մխիթար Հերացու, Գրիգորիսի, Ամիրդովլաթ Ամասիացու հայացքների ուսումնասիրության մի շարք հիվանդություններին (ալերգիկ և վարակիչ տենդեր, չարորակ ուռուցքներ, աթերոսկլերոզ) բնույթի, ինչպես նաև դեղային բուժման և մասնավորապես՝ բուսաբուժության վերաբերյալ Գրքույկը հասցեագրված է բժշկության, բնագիտության և բուսաբուժության պատմության հարցերով զբաղվողներին՝

Բժշկությունը հին Հայաստանի մշակույթի անբաժանելի մասն է, և նրա արմատները հասնում են դարերի խորքը: Սնվելով ժողովրդական բժշկության ակունքներից, այն կուտակել է բժիշկների բազում սերունդների դարավոր փորձն ու գիտելիքները՝ Հայաստանի բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև հանքային նյութերի բուժիչ հատկությունների մասին: Ուրարտական և ավելի վաղ շրջանի հնագիտական պեղումների արդյունքները (բժշկական զանազան գործիքներ, դեղատան սարք և այլն) վկայում են հին Հայաստանում բժշկական արվեստի բարձր մակարդակի մասին:

Նախնադարյան հասարակության մեջ բժշկի դերը կատարել է կինը, և ամենևին էլ զարմանալի չէ, որ առողջության պահապան աստվածությունն էլ մարմնավորված է կնոջ կերպարի մեջ: Հեթանոս հայերը սիրո և գեղեցկության դիցուհի Աստղիկին և պարկեշտության ու առաքինության դիցուհի Անահիտին պաշտում էին որպես բժշկության հովանավորների: Հիշյալ դիցուհիների տաճարները, Ե դարի պատմիչներ Ագաթանգեղոսի և Մովսես Խորենացու վկայությամբ, կառուցված են եղել հին Հայաստանի գեղատեսիլ վայրերում, Բարձր Հայքի, Այրարատի, Տարոնի, Վասպուրականի նահանգներում, որոնք ժամանակի ընթացքում դարձան կարևոր բուժական կենտրոններ:


Տաճարների քրմերը, յուրացնելով ժողովրդական բժշկության փորձը և կատարելագործվելով բժշկական արվեստի մեջ, օգնություն էին ցույց տալիս բնակչությանը:

301 թվականին Հայաստանում քրիստոնեությունը դարձավ պետական կրոն: Հին հեթանոսական տաճարների տեղերում հիմնվեցին քրիստոնեական վանքեր, որոնց կից բացվեցին առաջին հիվանդանոցները: Այսպես, Ե դարի պատմիչ Փավստոս Բուզանդը մեծ գովեստով է խոսում Ներսես Մեծ կաթողիկոսի շինարարական գործունեության մասին: Նա պատմում է, թե ինչպես Ներսես Մեծը Հայոց աշխարհի բոլոր կողմերում հիվանդանոցներ է շինել տալիս բորոտների, հաշմանդամների և ցավագարների համար:

Կաթողիկոսի այս միջոցառումները արտացոլված են Աշտիշատի եկեղեցական ժողովի որոշումներում (365 թ.) «Վարակիչ հիվանդությունների տարածվելը կանխելու համար հիմնել բորոտների համար բորոտ սոցներ, ի վանդների համար՝ հիվանդանոցներ, հաշմանդամների և յուլրերի համար՝ ապաստարաններ»:

Մասնավոր հիվանդանոցներ կային Հայաստանում դեռևս Գ դարում: Այսպես, 260 թ. հայ նախարար Սուրեն Սալահունու կինը Աղվիթան Առբենուտ կոչվող բուժիչ հանքային աղբյուրների մոտ իր միջոցներով բորոտանոց կառուցեց: Հիշեցնենք, որ Եվրոպայում առաջին բորոտանոցները բացվել են դրանից երեք հարյուր տարի հետո միայն:

Հայ ժողովրդական բժշկությունը, որ գրեթե երեք հազար տարվա պատմություն ունի, ստեղծել է դեղամիջոցների մի հարուստ գանձարան: Հնում առանձնապես մեծ համբավ ունեին Հայկական լեռնաշխարհի դեղաբույսերը, որոնք արտահանվում էին Արևելքի և Արևմուտքի մի շարք երկրներ և տեղ են գտել հնագույն դեղագիտարաններում: Այսպես, անտիկ հեղինակներ Հերոդոտը, Ստրաբոնը, Քսենոֆոնը, Տակիտոսը իրենց երկերում անդրադառնալով Հայաստանին, հիշատակել են նաև նրա բնաշխարհի բուժիչ բույսերի մասին: Քսենոֆոնը իր «Անաբասիս» երկում



Միջնադարյան հայ բժշկի դիմանկար
(Մատենադարան, ձեռ. № 8382)

խոսում է հայկական բուրումնավետ գինիների և հրաշալի գարեջրի, քնջութի, նուշի ձեթերի և բեկնի խեժի, ինչպես նաև անուշահոտ օծանելիքների մասին, որոնց պատրաստման գաղտնիքը հայտնի էր միայն հայերին: Հին աշխարհի անվանի բուսաբան Դիոսկորիդեսը, ծնունդով կիլիկիացի, իր «Materia medica» դեղագիտական աշխատության մեջ կանգ է առնում նաև բույսերի հայկական տեսակների վրա, որոնք, իր խոսքերով ասած, աչքի են ընկնում հրաշալի բուժիչ հատկություններով: «Ամենալավ համեմը, — գրում է նա, — հայկականն է, ոսկեգույն, դեղնավուն ցողունով և բավական հաճելի բուրմունքով»:

Հռոմեացի պատմիչ Տակիտոսը իր «Տարեգրություններում» հիշատակում է «գյուղական» դեղամիջոցների մասին, որ հաջողությամբ օգտագործում էին հայ գեղջուկները վերքերը բուժելու նպատակով.

Հայաստանը, ինչպես նաև Մարաստանը, հնում հանդիսացել են մի շարք արժեքավոր խեժաբեր բույսերի, այդ թվում նաև հայտնի ուպանի (Laserpitium) հայրենիքը: Վերջինիս բուժիչ հատկությունները, ինչպես վկայում է Պլինիոս Ավագը իր «Բնական պատմության» մեջ, չափազանց բարձր էին գնահատում հռոմեացիները:

Հայ պատմիչները բազմաթիվ ուշագրավ տեղեկություններ են հաղորդում հին հայկական բժշկության մասին: Այսպես, պատմահայր Մովսես Խորենացին գրում է, որ հայոց Վաղարշակ թագավորը (Բ դար մ.թ.ա.) Տայքի և Կողի ճահճոտ վայրերում այգիներ և բուրաստաններ է հիմնել: Այդ այգիներում և բուրաստաններում աճեցվում և բազմացվում էին, ինչպես վկայում է Ե դարի մի ուրիշ պատմիչ՝ Ղազար Փարպեցին, բնության մեջ վայրի ձևով աճող դեղաբույսեր: «Այնտեղ (Արարատյան դաշտում), — գրում է պատմիչը, — շատ կան զանազան բույսերի արմատներ, որ

օգտագործում են ճարտար, հմուտ և գիտուն բժիշկները արագ բուժող սպեղանիներ կամ ըմպելի դեղեր պատրաստելու համար, որոնցով բուժում էին երկար ժամանակ հիվանդությամբ տառապողներին»:

Հայաստանի բուժիչ բույսերը մեծ խնամքով աճեցվում էին հատուկ պարտեզներում, որ հիմնվել էին դեռ Արտաշես թագավորի (Ա դար մ.թ.ա.) նախաձեռնությամբ, որի մասին գովեստի հետևյալ խոսքերն է գրում Թ դարի պատմիչ Թովմա Արծրունին. « (Արտամետ քաղաքի) ամրոցի շուրջը նա տնկել տվեց զանազան բազմերանգ և անուշահոտ ծաղիկների բուրաստաններ, որոնք ոչ միայն հաճելի էին աչքի և հոտոտելիքի համար, այլև պիտանի՝ հնարամիտ բժիշկներին դեղեր պատրաստելու համար, համաձայն Ասկղեպիասի արվեստի»:

Այլ տեղեկությունների համաձայն, Պոնտոսի թագավոր Միհրդատը՝ հին աշխարհի ականավոր բժիշկը և թունագետը, իր հռչակավոր հակաթույնը պատրաստում էր Հայաստանի դեղաբույսերից: Որոշ բույսերի, ինչպես օրինակ լոշտակի (*Bryonia dioica*), սև գնդիկի (*Nigella sativa*) հրաշալի բուժիչ հատկությունները հին Հայաստանում առաջացրին այդ բույսերի պաշտամունքը, որի հեռավոր արձագանքները պահպանվել են հայ բանահյուսության մեջ:

Մեծ համբավ ունեին հնում հանքային դեղամիջոցները՝ հայկական կավը, հայկական քարը, հայկական բորակը, ինչպես նաև սնդիկի, երկաթի, ցինկի, արձձի միացությունները, որոնք Հայաստանից արտահանվում էին հարևան երկրները: Հայկական կավը (*Bolus armena*), որը պարունակում է ալյումասիլիկատներ և երկաթի օքսիդ, կիրառվել է որպես հակաբորբոքային, հակաալերգիկ և հակաուռուցքային դեղամիջոց, այն միաժամանակ

օգտագործվել է արյունահոսությունների և թունավորումների դեպքում: Այն լավ հայտնի էր անտիկ աշխարհի ականավոր բժիշկ Գաղիանոսին, իսկ հետագայում շատ բարձր է գնահատվել «բժշկության իշխան» Իբն-Սինայի կողմից, որը իր «Կանոնում» գրել է. «Հայկական կամ Անիական կավը զարմանալիորեն ներգործում է վերքերի վրա: Այն առանձնապես օգտակար է թոքախտի և ժանտախտի դեմ: Շատերը փրկվեցին մեծ համաճարակի ժամանակ, քանի որ սովորություն ունեին պարբերաբար խմել այն թուլլ գինու հետ»:

Հայկական կավը այսօր էլ մեծ կիրառություն ունի ժողովրդական բժշկության մեջ:

Հայ և օտար հեղինակների վկայությամբ, Հայաստանը հնում հայտնի է եղել պղնձի, երկաթի և արձձի հանքերով: Դեպի Վանա լճի եզերքն իջնող Ռշտունյաց լեռները, ինչպես վկայում է Փափստոս Բուզանդը, կոչվում էին երկաթահատների և կապարահատների լեռներ: Այդպիսի հանքեր կային նաև Սասնա լեռներում: Երկաթի միացություններից պատրաստված դեղամիջոցներն օգտագործվում էին մի շարք հիվանդություններ բուժելու համար և դեռ այսօր էլ պահպանվել են ժամանակակից դեղագիտարաններում:

Հին հայկական դեղանյութերի շտեմարանում հատուկ տեղ ունեին սնդիկի միացությունները, այդ թվում և կարմիր ներկը, որոնք արդյունահանվում էին Հայաստանում: Անտիկ աշխարհի նշանավոր աշխարհագետ և պատմիչ Ստրաբոնը վկայում է. «Այնտեղ (Հայաստանում) կան նաև այլ հանքավայրեր, այդ թվում և այնպիսիք, ուր արդյունահանվում է այսպես կոչված **սանդիկը (կարմիր ներկ, սոււր)**, որը կոչվում է հայկական ներկ և նման է ծիրանիին»:

Բուսական և հանքային դեղերից բացի հայ բժշկության մեջ օգտագործվել են նաև կենդանական ծագում ունեցող դեղամիջոց-

ներ՝ պատրաստված կենդանիների օրգաններից և հյուսվածքներից, որոնց մի մասը օժտված է ֆերմենտային հատկություններով:

Այս վերջինների թվին են պատկանում սեռական գեղձերի, ուղեղի, լյարդի, փայծաղի էքստրակտները, որոշ կենդանիների լեղին, նապաստակի խախացը, ինչպես նաև խառը բուսական-կենդանական բնույթ ունեցող «խոնավ գուֆան», որի մասին Իբն-Սինան իր «Կանոնում» գրել է հետևյալը. «Այդ այն ճարպն է, որ հավաքվում է Հայաստանում ոչխարների դմակի բրդի վրա, որ քարշ է գալիս կաղնչանի վրայով: Այն իր մեջ ներծծում է այդ խոտերի ուժը և կաթնահյութերը: Երբեմն ճարպը նոսր է լինում, ուստի եփում և թանձրացնում են այն: Այդ ճարպը մաշեցնում է կոշտ ուռուցքները և ուղղում է ծռված ոսկորները, եթե նրանով վիրակապ դրվի»: Վերոհիշյալ դեղանյութերը օժտված էին հակաթունային, հակասկլերոտիկ և հորմոնալ ներգործությամբ: Հայ ժողովրդական բժշկության այս արժեքավոր փորձը հետագայում՝ է — ժ դարերում, անսպառ աղբյուր դարձավ նրա հարստացման և զարգացման համար:

Ե դարի սկզբին Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայոց այբուբենը, որով և հայ մատենագրության հիմքը դրվեց: Պատմափիլիսոփայական երկերի կողքին իրենց պատվավոր տեղը գրավեցին բժշկությանը վերաբերող աշխատությունները: Պետք է նշել, սակայն, որ բժշկական գրականության առաջացումը ամենևին էլ չվերացրեց ժողովրդական բժշկության բանավոր ավանդույթները: Սրանք շարունակվելով նոր լիցք հաղորդեցին բժշկական գրականությանը:

Հայ դասական բժշկությունը իր զարգացման արշալույսին կրել է հելլենական մշակույթի բարերար ազդեցությունը:

Հին աշխարհի դասականների՝ Պլատոնի, Արիստոտելի, Հիպոկրատեսի, Գաղիանոսի, Ասկլեպիադեսի և ուրիշների երկերը,

որոնք հայերեն թարգմանվեցին հունաբան թարգմանչական դպրոցի ներկայացուցիչների ջանքերով, մեծ դեր խաղացին հայ բժիշկների աշխարհայացքի ձևավորման գործում: Այսպես, Ե դարի վերջում հայերեն թարգմանվեցին Արիստոտելի «Ստորոգութիւնք» և «Յաղագս մեկնութեան» երկերը, Զ դարի սկզբին՝ Պլատոնի բնափիլիսոփայական երկերը, այդ թվում և «Տիմէոսը», Զ դարի երկրորդ կեսին՝ Զենոնին վերագրվող «Յաղագս բնութեան մարդոյ», ինչպես նաև Կեղծ-Արիստոտելի «Յաղագս աշխարհի» և «Յաղագս առաքինութեան» ուսումնասիրությունները: Դրանցից հատկապես ուշադրության արժանի է Պլատոնի «Տիմէոս» երկը, որի մեջ հեղինակը, ելնելով չորս նախնական տարրերի (հող, ջուր, օդ, հուր) ուսմունքից, փորձել է բացատրել ոչ միայն տիեզերքի (մակրոկոսմոսի), այլև մարդու (միկրոկոսմոսի) առաջացման և զարգացման օրինաչափությունները: Նախնական տարրերի տեսությունը, որ հին աշխարհում իր զարգացումն է ստացել Պլատոնի, Արիստոտելի և Հիպոկրատեսի երկերում, առաջին անգամ չափաժողով ձևով շարադրել է հույն բնափիլիսոփա և բժիշկ Էմպեդոկլեսը: Հետագայում այն դրվեց հումորալ ախտաբանության տեսության հիմքում, որ չափազանց ուժեղ ազդեցություն է գործել միջնադարյան բժշկության վրա, գոյատևելով մինչև ԺԸ դարը: Իսկ Հիպոկրատեսի և Գաղիանոսի երկերի պատառիկների հայերեն թարգմանությունները մեզ են հասել համեմատաբար ուշ շրջանի՝ ԺԵ – ԺԷ դարերի ընդօրինակություններով: Մաշտոցյան մատենադարանում պահվող № 266 գրչագիրը գրված է ԺԵ դարի հայականավոր բժիշկ Ամիրդովլաթ Ամասիացու ձեռքով 1468 թ. և պարունակում է Հիպոկրատեսի «Պրոգնոստիկոն» երկից մի հատված, որի սկզբում բերված է մեծ բժշկի մահվան մասին հայկական մի ավանդություն: Հիշյալ գրչագրի մեջ կան նաև Գաղիանոսին

վերագրվող երկու ուրիշ հատվածներ՝ «Բառք Գաղիանոսի» և Գաղիանոսի «Վասն նշանաց ցաւոց»:

Պահպանվել են նաև մի քանի պատառիկներ մինչգաղիանոսյան շրջանի բժիշկների երկերից: Մաշտոցի անվան մատենադարանի № 6869 գրչագիր ժողովածուի մեջ, որ ընդօրինակել է գրիչ Մարտիրոսը 1365 թ., հատվածներ կան Ասկղեպիադեսին վերագրվող «Վասն բնութեան մարդոյ», «Վասն չորից բնութեանց մարդոյ եւ տարոյ, և ամսոյ», «Յաղագս բնութեան հոգւոյ» երկերից: Այս ժողովածուի մեջ զետեղված են նաև հատվածներ հին հռոմեացի բժիշկ Դեմոկրատեսի մի երկից, որի մեջ հեղինակը հարց ու պատասխանի ձևով շոշափում է պտղի զարգացման հարցերը ներարգանդային շրջանում և երեխայի ծնունդից հետո: Նույն այս ժողովածուի մեջ կան ուրիշ հատվածներ ևս՝ «Վասն տղայոց բնութեան», «Վասն երիտասարդաց բնութեան», «Վասն ծերոց բնութեան» երկերից, որոնք վերագրվում են ուշ հելլենիստական շրջանի հռոմեացի ականավոր բժիշկ Օրիբազեսին (Դ դար):

Այս աշխատությունների լեզուն վկայում է, որ նրանք ևս, հավանաբար, թարգմանված են «Տիմեոսի» թարգմանության ժամանակ:

Ը դարի սկզբին հայ ականավոր գիտնական Ստեփանոս Սյունեցին Դավիթ Հյուպատոսի հետ միասին թարգմանել է Դ դարի հույն բնափիլիսոփաներ Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» և Գրիգոր Նյուսացու, «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» երկերը: Այս աշխատությունները, որոնց մեջ Պլատոնի, Արիստոտելի և Գաղիանոսի ոգով քննված են մարդակազմության, մարդու կենսաբանության և հոգեբանության հարցերը, լայն ճանաչում էին գտել միջնադարյան հայ բժշկության մեջ: Նրանց ազդեցության հետքերը որոշակիորեն երևում են Աբուսայիդի, Գրիգոր Տաթևացու և այլ հայ բնափիլիսոփաների և բժիշկների երկերում:

Այսպիսով կարելի է ասել, որ երեք դար շարունակ (Ե — Ը դարեր) հայ բժշկության մեջ լարված աշխատանք էր ծավալվել հին աշխարհի գիտական ժառանգությունը ստեղծագործաբար յուրացնելու ուղղությամբ:

Միջնադարյան հայ բժշկապետները, լրջորեն ուսումնասիրելով անտիկ բժշկության դասականների աշխատությունները, նրանց տեսանկյունից վերլուծում և մշակում էին հայ ժողովրդական բժշկության ավանդները: Սակայն հայոց լեզվով ուրույն բժշկական երկերի ստեղծումը հետաձգվեց արաբական նվաճումների հետեւանքով, որոնք հայ մշակույթի ընդհանուր անկման պատճառը հանդիսացան Ը — Թ դարերում: Միայն Ժ դարում սկսեցին հանդես գալ հայ բժիշկների առաջին «Բժշկարանները», որ հիմնականում նվիրված էին հիվանդությունների դեղային բուժման հարցերին և որոնց մեջ հունական ազդեցությունից բացի աստիճանաբար նկատվում էր նաև արաբական մշակույթի ազդեցությունը: Այդ իսկ պատճառով ավելի վաղ շրջանի՝ Ե — Ժ դարերի բժշկագիտական հայացքների մասին կարելի է դատել միայն բնագիտական և փիլիսոփայական աշխատությունների և առաջին հերթին Եզնիկ Կողբացու (Ե դար) «Եղծ աղանդոց» երկի և «Յաճահապատումի» հիման վրա:

Միջնադարյան հայ մատենագրության մեջ չորս տարրերի և նրանց համապատասխանող չորս հիմնական հեղուկների (արյուն, լորձ, դեղին և սև մաղձ) անտիկ տեսությունը առաջին անգամ հանդես է գալիս Եզնիկ Կողբացու երկում: Հիվանդությունների առաջացումը Եզնիկը կապում է հիմնական հեղուկների հավասարակշռության խախտման հետ: «Հիվանդություններ կան, — գրում է նա, — որոնք առաջանում են ոչ թե մեղքերի պատճառով, այլ անկշիռ (հյուլթերի) խառնվածքներից: Որովհետև մարդու մարմինը հանդիսանում է չորս տարրերի խառնուրդ... Եվ եթե նրանցից որևէ

մեկը ավելանա կամ պակասի, ապա կառաջանա հիվանդություն»։ Սակայն հեղուկներից բացի եզնիկը հաշվի է առնում նաև արտաքին միջավայրի գործոնների ազդեցությունը. «չափից ավելի կամ անխտիր ամեն բան ուտելը, խմելը, խիստ ժուժկալությունը, տոթ կամ ցուրտ եղանակին աշխատելը և այլ վնասակար հանգամանքները»։ Այս վնասակար ազդակներին նա մեծ նշանակություն է տալիս նաև նյարդային և հոգեկան հիվանդությունների առաջացման հարցում։ Հիպոկրատեսի նման, որը մերժում էր ընկնավորության «սրբազան» բնույթը, նա ևս հոգեկան հիվանդությունները համարում է ուղեղի հյուսման հետևանք։ «Ուղեղի հյուսման հետևանքով մարդ կորցնում է գիտակցությունը։ Խոսում է պատերի հետ, կռվում է քամու հետ։ Այդ պատճառով էլ բժիշկները համառորեն պնդում են, որ ոչ մի դե էլ չի յտնում մարդու մարմնի մեջ, որ մարդու այդ բոլոր վիճակները հիվանդություններ են, որ իրենք կարող են բուժել»։ Ծնված լինելով Այրարատում և հրաշալի իմանալով Հայաստանի դեղաբույսերի հատկությունները, շատ լավ հասկանալով զանազան դեղամիջոցների չափերի և սիներգիկ ներգործության հարցերը, նա գրել է. «Մուլախինդն ինքնին հայտնի է որպես մահացու թույն որոշակի պայմաններում, բայց բժիշկներն այն օգտագործում են լեղապարկի հին հիվանդությունները բուժելու ժամանակ։ Կաղնչանի մի տեսակը առանձին վերցրած թունավոր է, իսկ մյուս դեղամիջոցների հետ միասին բուժում է լեղապարկի հիվանդությունները և հիվանդին փրկում մահից»։

Միջնադարյան Հայաստանի ականավոր փիլիսոփա Դավիթ Անհաղթը (ե դարի վերջ Զ դարի սկիզբ) հրաշալի ծանոթ էր հիպոկրատյան բժշկության սկզբունքներին։ Նրա «Սահմանք իմաստասիրութեան», «Վերլուծութիւն» «Ներածութեան» Պորփիրի», «Մեկնութիւն ի Վերլուծականն Արիստոտելի» երկերում շոշափված են մարդակազմության, կենսաբանության, դեղագի-

տուրջան, հիգիենայի և բժշկական բարոյագիտության հարցերը: Հատկապես պետք է նշել, որ «Վերլուծութիւն» «Ներածութեան» «Պորփիրի» աշխատության էջերում հանդիպում է հայ մատենագրության ամենավաղ վկայությունն այն մասին, որ Հայաստանում կատարվել է դիահերձում: «Վերլուծության գործն է, — գրում է նա, — գոյի բաժանումը այն մասերի, որոնցից նա կազմված է. ինչպես օրինակ, երբ մեկը վերցնում է մարդուն և անդամահատում, հերձում նրա ոտքերը, ձեռքերը, գլուխը և այնուհետև մարմինը բաժանում ոսկրերի, ջլերի, անոթների և նյարդերի»: Դիահերձումները և կենդանահատությունը, որ ժամանակին կիրառվել են անտիկ Ալեքսանդրիայի բժշկական դպրոցում, հետագայում շարունակվել են նաև միջնադարյան հայ բժիշկների կողմից, որոնք սերտորեն կապված են եղել ալեքսանդրյան դպրոցի ավանդույթների հետ:

Բժշկության նկատմամբ մեծ հետաքրքրություն է ունեցել հայ ականավոր աստղագետ և փիլիսոփա Անանիա Շիրակացին, որ 667 թ. իր կազմած «Քննիկոնում» աստղաբաշխությանը, համարողական արվեստին (մաթեմատիկա), տոմարագիտությանը և փիլիսոփայությանը վերաբերող աշխատությունների կողքին տեղ է տվել նաև բժշկագիտական երկերին: Դժբախտաբար «Քննիկոնի» մեծ մասը, այդ թվում և բժշկական ու բնագիտական երկերը, այժմ կորած են: Այն մասին, որ Անանիա Շիրակացին զբաղվել է նաև բուսաբուժության հարցերով, հիշատակված է Մաշտոցի անվան Մատենադարանի № 549 գրչագրում, որտեղ նկարագրված են համասփյուռ կոչվող բույսի (*Lychnis L.*) բուժիչ հատկությունները, որի պաշտամունքը եղել է Հայաստանի մի շարք շրջաններում:

Նույն տեղում ասված է, որ Շիրակացին այդ խիստ հազվա-

գյուտ բույսը հայտնաբերել է Այրարատյան նահանգի Չողակերտ վայրում և օգտագործել է բուժիչ նպատակով:

Արաբական տիրապետության դեմ հայ ժողովրդի մղած դարավոր պայքարն ավարտվեց հայկական պետականության վերականգնումով, որ նպաստեց Հայաստանի տնտեսության վերականգնմանը, քաղաքների աճին, արհեստների, առևտրի և մշակույթի ծաղկմանը: Արվեստների, գիտության և մանավանդ բժշկության զարգացման համար հատկապես նպաստավոր պայմաններ ստեղծվեցին ժ — ժԱ դարերում Անիի Բագրատունյաց թագավորության ժամանակ: Անիում, Հաղպատում և Սանահինում ստեղծվեցին բարձրագույն դպրոցներ՝ միջնադարյան համալսարաններ, որտեղ փիլիսոփայության և բնական գիտությունների կողքին ուսումնասիրում էին նաև բժշկություն: Այդ շրջանի բժշկական պատկերացումները առավել ամբողջությամբ արտացոլված են Գրիգոր Մագիստրոսի աշխատություններում, որ Իբն-Սինայի ժամանակակիցն էր: Քաջատեղյակ լինելով անտիկ մշակույթին և հանդիսանալով բազմակողմանի զարգացած անձնավորություն, Գրիգոր Մագիստրոս Պահլավունին իրեն դրսևորել է հայ մշակույթի տարբեր բնագավառներում՝ իբրև բանաստեղծ, փիլիսոփա և բժիշկ: Գրիգոր Մագիստրոսը հաճախ ստիպված է եղել ընդհատել իր գիտական ուսումնասիրությունները վանական մատենադարանների կամարակապ սրահների անդորրության մեջ և ցած դնել գրիչը զենք վերցնելու համար: Բագրատունիների թագավորության վերջին բուռն տարիներին նա իր հորեղբայր, սպարապետ Վահրամ Պահլավունու նման սուրը ձեռքին պաշտպանել է հայրենիքը բազմաթիվ թշնամիներից: Իսկ երբ լռում էին ճակատամարտերի ձայները և վրա էին հասնում խաղաղ տարիները, նա կրկին ամբողջությամբ նվիրվում էր գիտական և շինարարական գործունեության, նորոգում էր վնասված կամ կործանված վանքերը

Հայաստանի զանազան գավառներում (Սանահին, Տարոն, Կեչառիս), կառուցում նորերը, նրանց կից հիմնադրում մատենադարաններ և ձեմարաններ, որտեղ և դասավանդում էր ինքը: Նա գիտական սերտ կապեր ուներ ոչ միայն Հայաստանի, այլև Բյուզանդիայի գիտնականների և պետական գործիչների հետ: Բագրատունյաց թագավորության մայրաքաղաքը, որ դեռ այն ժամանակ հարյուր հազարից ավելի բնակիչ ուներ և մի վաճառաշահ ու բարեկարգ քաղաք էր, աշխարհի տարբեր երկրներից դեպի իրեն էր ձգում գիտնականներին: Գրիգոր Մագիստրոսը նամակագրական կապ էր պահպանում նրանցից շատերի հետ: Այդ նամակներում, որոնց մի մասը բարեբախտաբար պահպանվել և մեզ է հասել, պատկերված են ժամանակի վարքն ու բարքը, հայոց մայրաքաղաքի մշակույթը, և վերջապես, Մագիստրոսի՝ բժշկի և փիլիսոփայի, գիտական նախասիրությունների լայն շրջանակը: Նրա նամակներից մեկը հասցեագրված է բյուզանդացի բժիշկ Կյուրակոսին, որ Անիում դասախոսություններ էր կարդում մարսողական օրգանների գործունեության մասին: Վիճաբանությունների ժամանակ Գրիգոր Մագիստրոսի հարցերից մեկի կապակցությամբ հույն բժիշկն ասում է, թե իրեն ոչ մի բան, որ դուրս է իր նեղ մասնագիտության շրջանակներից, ամենևին չի հետաքրքրում. իր փայլուն նամակպատասխանում, որ և նամակային ժանրի հրաշալի օրինակ է, Մագիստրոսը մերկացնում է նման միակողմանի մոտեցման սխալ լինելը և հին բնափիլիսոփայության լույսի տակ ցույց է տալիս այն սերտ կապը, որը գոյություն ունի բնության բոլոր երևույթների միջև: Կյուրակոսի հետ մի քանի տարի տևող գիտական վիճաբանության ընթացքում Մագիստրոսը դրսևորել է իր խոր գիտելիքները բժշկության բնագավառում և Պլատոնի, Հիպոկրատեսի, Գաղիանոսի, Ասկղեպիադեսի, Նեմեսիոս Եմեսացու, որոնց հետևորդն էր համարում իրեն, աշխատությունների լայն իմացությունը:

Գրիգոր Մագիստրոսը ոչ միայն տեսական հարցերով տարված փիլիսոփա-գիտնական էր, այլև հմուտ պրակտիկ բժիշկ: Բագրատունյաց հարստության վերջին Գագիկ թագավորի հիվանդության մասին Սևանի վանահորը գրած նամակում, ինչպես նաև այլ նամակներում, որոնց մեջ նա նկարագրում է ծաղիկ հիվանդությունը, որով վարակվել էր իր որդին կամ խելացի խորհուրդներ էր տալիս տենդային հիվանդությամբ տառապող Սարգիս վարդապետին, մեր առջև հառնում է նուրբ մասնագիտական զգացողությամբ օժտված փորձառու բժշկի կերպարը, որ քաջածանոթ էր հիվանդությունների մահճաբուծությանը, դեղագիտությանը և մանավանդ բուսաբուծությանը:

Իր նամակագիրներից մեկին, որ տառապում էր տենդային հիվանդությամբ, նա խորհուրդ է տալիս օգտագործել հազար (*Lactuca L.*) կոչվող բույսի սերմերը: «Եթե նրա կեղևը ճերմակ է, ապա նա թուլություն է առաջ բերում, որ շատ նպաստում է քնելուն: Հաճախ, եթե այն դնես վերքի վրա, բարերար ներգործություն է ունենում տենդային հիվանդի վրա: Եթե նրա սերմը խառնես զաֆրանի հետ և դնես հիվանդի ճակատին, նա թեթևացնում է այրող վերքի բորբոքումը, իսկ ուրիշ շատ տեսակներ, մենք կարծում ենք, օգտակար են ոչ միայն տենդերով տառապող հիվանդներին»:

Հին աշխարհի մշակույթի նկատմամբ մեծ հետաքրքրություն են ցուցաբերել նաև ուրիշ հայ գիտնականներ և գործիչներ, մասնավորապես Հովհաննես Սարկավագը (1045 — 1129 թթ.), որ դասախոսել է Անիի և Հաղպատի բարձրագույն դպրոցներում: Արտահայտելով նոր ժամանակների հովերը, Սարկավագը քարոզում էր գիտության աշխարհականացում և փորձի ճանապարհով գնալու գաղափարը: «Հետազոտողը պետք է բազմակողմանի կրթություն և գիտելիքներ ունենա, նա պետք է յուրացնի

ոչ միայն Սուրբ գիրքը, այլև արտաքին (աշխարհիկ) գիտությունները: Եվ եթե նա նույնիսկ կատարելապես տիրապետի նրանց, միևնույնն է, առանց փորձի իմացությունը չի կարող ստույգ լինել: Միայն փորձն է, որ անսասանելի և անվիճելի է»: Հայ փիլիսոփայի այս մտքերը նախորդել են եվրոպական վերածննդի ներկայացուցիչների գաղափարներին:

Այսպիսի ինտելեկտուալ մթնոլորտը նպաստում էր աշխարհիկ գիտությունների և, իհարկե, բժշկության զարգացմանը: Հենց Անիում, Բագրատունյաց հարստության շրջանում էր, որ սկիզբ դրվեց ախտաբանության, թերապիայի և դեղագործության հարցերին նվիրված ուրույն աշխատությունների, այսպես կոչվող բժշկարանների, ստեղծմանը: Դժբախտաբար ժամանակը չի պահպանել հռչակավոր «Բժշկարանի» հեղինակի անունը, որ գրվել է «Հաղթող Գագիկ» թագավորի օրոք (խոսքը Շիրակի Բագրատունյաց հարստության Գագիկ Ա թագավորի (990 — 1020 թթ.) մասին է, այսինքն մոտավորապես այն ժամանակ, երբ ստեղծվել է Իբն-Սինայի «Կանոնը»: Հետագայում այն խմբագրվել է Կիլիկյան Հայաստանում և ստացել «Գագիկ-Հեթումյան բժշկարան» անվանումը: Աշխատության մեջ օգտագործված տերմիններից երևում է, որ հեղինակը մոտիկից ծանոթ է եղել և հին աշխարհի նշանավոր բժիշկների երկերին, և արաբ հեղինակների գործերին: Արաբերենը Արևելքում գիտության լեզու դառնալուց հետո աստիճանաբար գործածությունից դուրս մղեց հունական տերմինները, որ մինչև ժ դարը գերիշխում էին հայկական բժշկարաններում: «Գագիկ-Հեթումյան» բժշկարանը մեծ ազդեցություն է գործել Հայաստանի միջնադարյան բժշկության զարգացման հետագա ամբողջ շրջանի վրա:

Բոլորովին պատահական չէ, որ վերոհիշյալ բժշկարանը խմբագրվել է Կիլիկյան Հայաստանում և հարստացվել երկու

բաժիններով: Բագրատունյաց թագավորության անկումից հետո (1045 թ.), միջնադարյան Հայաստանի քաղաքական և մշակութային կենտրոններից մեկն է դառնում Ռուբինյան իշխանությունը Կիլիկիայում, որն այնուհետև, 1198 թ., սկիզբ է դնում Ռուբինյան թագավորական հարստությանը, դեպի ուր հետզհետե հավաքվում էր հայ մտավորականությունը՝ բանաստեղծներ, երաժիշտներ, նկարիչներ, գիտնականներ, բժիշկներ: Հռոմկլայում հայ կաթողիկոսների՝ Ներսես Շնորհալու (1166 — 1173 թթ.), Գրիգոր Տղայի (1173 — 1193 թթ.) վեհարաններում և Ռուբինյան-Հեթումյան թագավորների մայրաքաղաք Սիսում բարենպաստ պայմաններ ստեղծվեցին բնական գիտությունների և բժշկության զարգացման համար պատմական Հայաստանի ավանդույթների հիման վրա:

Բժշկության, հատկապես մարդակազմության, առաջադիմությանը նպաստում էր դիախերձումների և կենդանահատումների ազատությունը, որի մասին վկայություններ են պահպանվել գրավոր աղբյուրներում: Հովհաննես Երզնկացին (ԺԳ դար) իր քարոզներից մեկում ասում է. «Փորձառու և իմաստուն բժիշկը ստանալով մահվան դատապարտված հանցագործի... սպանում է նրան դաժան մահով, ուսումնասիրելով նրա օրգանների, նյարդերի, մկանների, անոթների և ներքին օրգանների վիճակը: Այսպիսով մեկ մարդու տառապանքների գնով նա օգուտ է բերում շատերին»:

Կիլիկյան Հայաստանի և նրա բժշկական դպրոցի հետ է կապված եղել Մխիթար Հերացու գիտական ու բժշկական բեղմնավոր գործունեությունը: «Մեծն Մխիթար» են կոչել նրան իր ժամանակակիցները և հետագա ժամանակների բժիշկները: Նա հիմնադիրն է միջնադարյան հայ բժշկության, որի համար նույն դերն է խաղացել, ինչ Հիպոկրատեսը հունական, Գաղիանոսը՝ հռոմեական և Իբն-Սինան՝ արաբական բժշկության համար: Նա հավաքել, ուսումնասիրել և ընդհանրացրել է անցյալ դարերի

փորձը ինչպես դասական, այնպես էլ ժողովրդական բժշկության բնագավառում, ստեղծելով այնպիսի աշխատություններ, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց արժեքը: Մխիթար Հերացու նախորդները, անհայտ ու անանուն հայ բժիշկները, անհրաժեշտ նախապատրաստական աշխատանք են կատարել՝ թարգմանելով հույն, հռոմեացի և արաբ բժիշկների գիտական ժառանգությունը, ստեղծելով նաև մի շարք սեփական գործեր գլխավորապես դեղագիտության և թերապիայի վերաբերյալ: Սակայն այդ ամենը չէր կարող բավարարել այնպիսի լուրջ ու պահանջկոտ գիտնականին, որպիսին եղել է «Մեծն Մխիթարը»: Ահա թե ինչպես է բնութագրում միջնադարյան հայ բժշկության դասականը իր առաջ ծառայած խնդիրները «Ջերմանց մխիթարութիւն» աշխատության նախաբանում. «Ես Մխիթար Հերացիս, տրուպս ի բժշկաց, որ ի մանկութենէ սիրող եղէ իմաստութեան և բժշկական արուեստից և վարժեցայ ի դպրութիւն արաբացոց, և պարսից, և հելլենացոց, տեսի ընթերցումն որ առ նոսա գրոցն զի ունէին զարուեստ բժշկութեան լի և կատարեալ ըստ առաջին իմաստնոցն այսինքն զնախագիտութիւն, որ է իմաստ և վարդապետութիւն բժշկական արուեստից: Եւ ի Հայք բնաւ ոչ գտի զվարդապետութիւն և զիմաստ նախագիտութեան, այլ զստածումն միայն»:

Թողնելով իր հայրենի Հեր քաղաքը (այժմ Խոյ քաղաքը Պարսկաստանում), ժԲ դարի առաջին կեսին պատանի Մխիթարը մեկնում է Կիլիկյան Հայաստան, որտեղ նա բժշկական կրթություն է ստանում, արժանանալով բժշկապետի պատվավոր կոչման: Լինելով անսպառ եռանդի տեր, նա չի կարողանում ապրել խաղաղ, ավիված ու ձևված կյանքով: Բնավորությամբ փորձարար և հետաչուտող, հաճախ նա մեկնում է հեռավոր երկրներ, որոնելով դեղաբույսեր, վարելով պատահականություններով լի պերիոդատ (թափառաշրջիկ) բժշկի կյանք: Ապա սկսվում է հետազոտական


աշխատանքի մի նոր շրջան մերթ գիտնականի փորձասենյակում, մերթ հիվանդի անկողնու մոտ, որի արդյունքները ընդհանրացված են իր աշխատություններում: Այդ շրջանում են ստեղծվում մարդակազմությանը, կենսաբանությանը, ախտաբանությանը, դեղագիտությանը վերաբերող աշխատությունները, որոնց մեծ մասը, դրժբախտաբար, հայ ժողովրդի ողբերգական ճակատագրի քմահաճույքով կորել են անդարձ: Նրանցից միայն առանձին բեկորներ են մնացել այս կամ այն ժողովածուի մեջ, հետագա ժամանակների բժիշկների երկերում:

Մխիթար Հերացու՝ բժշկի և բնախույզի, գիտական լայն հետաքրքրասիրությունների մասին կարելի է գաղափար կազմել, ելնելով նույնիսկ այդ փոքրիկ հատվածներից, որոնք վերնագրված են «Վասն շինուածոյ և յօրինուածոյ աչացն», «Վասն փոշտանկի, որ է ձվանքն», «Վասն քարանց», «Ռոտացոյց և շարժացոյց»:

Ինչ վերաբերում է դեղագիտությանը և ախտաբանությանը նվիրված աշխատություններին, որ երկար ժամանակ նույնպես կորած էին համարվում, ապա, ինչպես ենթադրում են հայ բժշկության պատմության մասնագետները, վերջիններս հետագայում «Զերմանց մխիթարութիւն» աշխատության հետ միասին մուծվել են վերոհիշյալ «Գագիկ-Հեթումյան բժշկարանը»:

Հայ բժշկապետի գիտական և բժշկական այսպիսի բեղմնավոր գործունեության հետևանքն այն եղավ, որ նա արդեն 60-ական թվականներին մեծ համբավ էր ձեռք բերել բժշկության մեջ և հանդիսանում էր Ներսես Շնորհալի կաթողիկոսի մտերիմ բարեկամը, որ նրան է նվիրում բնափիլիսոփայական բնույթի մի պոեմ «Երկնքի և նրա լուսատուների մասին» վերնագրով: ԺԲ դարի ութսունական թվականներին Մխիթար Հերացին ձեռնամուխ է լինում իր կյանքի գլխավոր գործի՝ «Զերմանց մխիթարության» շարադրմանը, որի համար նա երկար ժամանակ համբերությամբ

նյութեր էր հավաքել ոչ միայն ուսումնասիրելով հին աշխարհի և արաբ բժիշկների աշխատությունները, այլև շրջելով Կիլիկյան Հայաստանի ճահճոտ վայրերը և ուսումնասիրելով այդ վայրերին հատուկ դողերոցքը (մալարիա) և այլ վարակիչ հիվանդություններ: Զարմանալի չէ, ուրեմն, որ այդ աշխատանքը գտնվում էր բոլոր նրանց ուշադրության կենտրոնում, ովքեր մտահոգված էին երկրի բարօրությամբ: Առաջին հերթին պետք է նշել փիլիսոփա և բանաստեղծ Գրիգոր Տղա կաթողիկոսի անունը, որն ամեն կերպ խրախուսել և օժանդակել է բժշկապետին և որի մասին Մխիթար Հերացին իր գրքի նախաբանում գրում է հետևյալը. «Ես կամենում էի, որքան ուժերս ներեն այս գիրքը գրել համառոտ, միայն երեք տեսակ ջերմերի վերաբերյալ, նախագիտությամբ և ստածմամբ: ...Ես վայելում էի հայոց սրբազան կաթողիկոս Գրիգոր (Տղա մականվամբ) սերն ու հովանավորությունը, որը և պատճառ եղավ այս աշխատությունը գրելուն: ...Այս պատճառով էլ ես համաձայնեցի գրել այս գիրքը հանուն անհրաժեշտության և օգտակարության... Մենք գրեցինք այս գիրքը և անվանեցինք այն «Զերմանց մխիթարություն», որ նա մխիթարի բժշկին ուսմամբ, իսկ հիվանդին՝ առողջությամբ»: Համոզված լինելով, որ իր գիրքը պիտանի կլինի ոչ միայն մասնագետների, այլև ժողովրդի լայն խավերի համար, Մխիթար Հերացին իր գիրքը գրեց ոչ թե գրաբարով, որ այն ժամանակի գիտության լեզուն էր, այլ Կիլիկյան Հայաստանի խոսակցական լեզվով՝ միջին հայերենով: Նրա այդ համարձակ քայլը վկայում է մեծ բժշկապետի հայացքների ժողովրդական բնույթի մասին, որ իր վառ կնիքն է դրել հայ բժշկության հետագա զարգացման վրա: Մեծ աշխատանք է կատարել Մխիթար Հերացին նաև հայ բժշկական տերմիններ ստեղծելու ուղղությամբ, ընդ որում նա գնաց ճիշտ ճանապարհով, օգտագործելով բնիկ հայ բառարմատները և նրա ստեղծած բազմաթիվ տերմիններ պահ-



Միջնադարյան բուսաբուսության մեջ կիրառվող ճավշիի տեսակներ (Oporanax Koch)
(Մատենադարան, ձեռ. № 6594)

պանվել և այսօր էլ կիրառվում են արդի բժշկական գրականության մեջ:

«Զերմանց մխիթարութիւն» գրքում արտահայտված է խոշոր գիտնականի տարերային մատերիալիստական հայացքը տենդերի հարուցիչ գործոնների եռության վերաբերյալ, որի արդյունքը եղավ ինքնատիպ մի տեսություն, այսպես կոչված «բորբոսային» տեսությունը, և վերջապես, միջնադարյան սխոլաստիկայից նրա ազատ լինելը, մանավանդ բուժման հարցերում: Մխիթար Հերացու դիրքը ջերմերի հարուցիչ գործոնների նկատմամբ, մոտ է անտիկ աշխարհի բժշկության հիմնադիր Հիպոկրատեսի տեսակետին, որը մեծ նշանակություն էր տալիս ինչպես արտաքին միջավայրի անբարենսպաստ գործոններին, այնպես էլ ներքին ազդակներին (հոգեկան ապրումներ, անքնություն, ընդհանուր հյուժում): Հերացու կարծիքով արյան և մարմնի մյուս հեղուկների մեջ գոյություն ունեցող «բորբոս» է, որ առաջ է բերում «բորբոսային» տենդ: Հայ բժշկության պատմությանը քաջատեղյակ Լ. Հովհաննիսյանը Հերացու մասին գրում է հետևյալը. «Անվիճելի և օբյեկտիվ փաստ է, որ մինչմանրէաբանական շրջանի բժիշկներից ոչ մեկը չի օգտագործել վարակի եռությունը բնորոշող այնպիսի մի տերմին, որն սվելի մոտ լիներ ճշմարտությանը, քան այդ արել է Մխիթար Հերացին»: Հերացին տենդը «միօրյա», «բորբոսային» և «հալւմաշ» խմբերի բաժանելիս առաջնորդվել է հումորալ տեսության սկզբունքներով: Սակայն այս դեպքում բժշկապետը մի ներքին զգացողությամբ առանձնացրել է «միօրյա» տենդերը, որոնք չեն տեղավորվում հումորալ ախտաբանության շրջանակներում: Դրանց պաթոգենեզը բացատրելու համար նա դիմում է հին հեղինակների պնևմատիկ տեսությանը. տվյալ դեպքում, սակայն, գլխավորն այն է, որ փորձառու բժշկի աչքից չեն վրիպել այդ հիվանդությունների ընթացքի մի քանի «ոչ բնորոշ» առանձնա-

հատկություններ, և այս հիմք է տալիս ենթադրելու, որ «միօրյա» տենդերի խմբում նա նկարագրել է ալերգիկ հիվանդությունների մի քանի ձևեր (ֆիզիկական, քիմիական, սննդային, նյարդա-հոգեկան ալերգիաներ) :

«Բորբոսային տենդեր» բաժնում Մխիթար Հերացին տեղադրել է միջին դարերում լայնորեն տարածված մի շարք վարակիչ հիվանդություններ, ինչպես օրինակ, դողերոցքը, տիֆային և սեպտիկ հիվանդությունները, ժանտախտը, ծաղիկը, կարմրուկը:

Հարուստ փորձը մեծ բժշկապետին թույլ է տվել պարզելու բորբոսային տենդի, մանավանդ տիֆի վարակիչ լինելը: «Եթե հիվանդը շատ է տանջվում բարձր ջերմությունից և անհանգիստ շուռ ու մուռ է գալիս մի կողքից մյուսին և եթե նրա փորն ուռչում է և մատով փորին բախելիս թմբուկի ձայն է գալիս, հաստատ իմացիր, որ նա մահանալու է, մանավանդ եթե մարմնի վրա էլ սումախի մեծությամբ սև բծեր դուրս տան: Շրջապատողները պետք է խուսա տան և չչփվեն նրա հետ», գրել է նա իր «Ջերմանց մխիթարութիւն» գրքում: Այս մտքերը հետագայում, ժՋ դարում, եվրոպական գիտության մեջ զարգացրեց իտալացի ականավոր բժիշկ Ջիրոլամո Ֆրակաստորոն հատկապես իր «Վարակի, վարակիչ հիվանդությունների և նրանց բուժման մասին» գրքում:

Ինչ վերաբերում է «հալւմաշ» տենդերին, որոնք համապատասխանում են պալարախտի տարբեր կլինիկական ձևերին (թոքախտ, ոսկրախտ և այլն), ապա նրանց ծագումը, Մխիթար Հերացու կարծիքով, պայմանավորված է հոգեկան ծանր ապրումներով, գերհոգնածությամբ, վատ սննդով, կլիմայական անբարենպաստ պայմաններով, որոնց այսօր էլ բժշկությունը մեծ նշանակություն է տալիս:

Ախտանիշների և տենդային հիվանդությունների ընթացքը նկարագրելիս Մխիթար Հերացին հանդես է գալիս որպես լուրջ,

խոհուն բժիշկ, որ տիրապետում էր հիվանդի քննության բազմազան մեթոդների, սկսած հիվանդին մանրամասն հարցուփորձ անելուց (անամնեզ), մինչև այսօր էլ բժշկության մեջ կիրառվող օբյեկտիվ մեթոդները՝ զննում, շոշափում, բախազննում, ունկնդրում: Մեծ տեղ էր տալիս Հերացին հիվանդի զարկերակի ուսումնասիրությանը, ջերմությունը որոշելուն, ինչպես նաև խորխի, մեզի և այլ արտաթորանքների հետազոտությանը: Հին աշխարհի բժիշկների նման Հերացին հիվանդությանը մոտենում էր դիալեկտիկորեն, բաժանելով այն չորս շրջանի՝ նախնական, սաստկացման, ավարտման և նվազման: Հենվելով տենդի ընթացքի տարբեր շրջանների մասին Հիպոկրատեսի տեսության վրա, նա բժիշկներին խորհուրդ էր տալիս կոնկրետ մոտեցում ունենալ յուրաքանչյուր հիվանդին, հաշվի առնելով հիվանդության շրջանը և ըստ այդմ էլ կանխագուշակել հիվանդության ելքը:

Զինված այսպիսի գիտելիքներով, Հերացին փորձնական ճանապարհով, հաճախ հակառակ սխուլաստիկ հայացքների, մշակեց բուժման կոմպլեքսային մի համակարգ, որը հիմնված էր դեղային բուժման և մասնավորապես բուսաբուժության, ինչպես նաև սննդաբուժության և ֆիզիկական մեթոդների վրա: Հավատարիմ անտիկ աշխարհի բժշկության սկզբունքներին, հայ բժշկապետը առաջարկում էր բուժումը տանել ըստ Հիպոկրատեսի պահանջի, այն է՝ բուժել «հակառակը հակառակով»:

Մխիթար Հերացին դեղաբուժության մեջ գլխավոր տեղը հատկացնում էր բուսաբուժությանը, որ հենվում էր ինչպես հայկական ժողովրդական բժշկության, այնպես էլ Արևելքի զարգացած երկրների բժշկության դարավոր փորձի վրա:

Վարակիչ-ալերգիկ հիվանդությունների բուժման համար հայ բժշկապետի առաջարկած դեղանյութերի մեջ աչքի են ընկնում Հայաստանում աճող հակաբակտերիալ, հակաբորբոքային և

հակաալերգիկ հատկություններով օժտված բույսերը: «Ջերմանց մխիթարութիւն» գրքում առաջարկված բարդ դեղատոմսերում հաճախ են հանդիպում նունուֆարը, մանուշակը, հիրիկը, խռնդատը, մշտիկը, կղմուխը, օշինդրը, եզան լեզուն, մատուտակը, սորնջանը, կապարը, դաղձը, ուրցը, տատաշը և շատ ուրիշ դեղաբույսեր: Բույսերից բացի այդ դեղատոմսերում հանդիպում են կենդանական ծառում ունեցող դեղանյութեր (կղբու ձու, եզան լեղի), ինչպես նաև հանքային պրեպարատներ (հայկավ, ծծումբ, ցինկ, բորակ և այլն), որոնք ունեն ընդհանուր տոնուսը բարձրացնող հակաթունային, հականեխիչ և այլ, դեռևս քիչ ուսումնասիրված հատկություններ:

Տենդային հիվանդություններով տառապող հիվանդների համար Մխիթար Հերացին առաջարկում էր հատուկ սնունդ, մեծ տեղ հատկացնելով կանաչեղենին, բանջարեղենին, մրգերին ու պտուղներին, ինչպես թարմ, այնպես էլ չորացրած, նրանց հյութերին և մուրաբաներին: Տենդային հիվանդներին առաջարկում էր գործածել գինձ, ռեհան, կարոս, բամիա, դանդուռ, մրգերից՝ նուռ, սերկևիլ, խաղող, փշատ, թուզ, ունաբ, սալոր: Հայ բժշկապետը խորհուրդ էր տալիս նշանակել հիվանդին դյուրամարս սնունդ՝ թարմ ձուկ, հավի միս, մսաջուր, ձվի դեղնուց, կաթ (թոքախտով հիվանդներին՝ այծի և էշի կաթ):

Բուժման ֆիզիկական մեթոդների շարքում Հերացին մեծ տեղ էր հատկացնում ջրաբուժմանը (շփումներ, լոգանք), ինչպես նաև մերսումներին և մարմնամարզական վարժություններին: Մեր բժշկապետը լուրջ ուշադրություն էր դարձնում պսիխոթերապևտիկ մեթոդներին, ներշնչմանը, այդ նպատակով օգտագործելով նաև երաժշտությունը: Այսպես, «միօրյա» տենդի դեպքում, որ առաջ է գալիս նրա խոսքերով ասած «հոգսերի և դառնությունների պատճառով», նա առաջարկում է հետևյալը՝ «Զբաղեցրու (հիվանդին) խաղերով և կատակներով ու ամեն միջոցով նրան ուրախացրու. թող

որքան կարելի է հիվանդը շատ լսի գուսանների երգը, լարերի հնչյունը և հաճելի մեղեդիներ»:

«Ջերմանց մխիթարութիւն» գրքի հնագույն գրչագիրը կրում է 1279 թ. և այսօր պահվում է Մաշտոցի անվան մատենադարանում (ձեռ. № 416):

Մեծ բժշկապետի երկերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե որքան բարձր մակարդակի էր հասել հայ բժշկությունը Մխիթար Հերացու ժամանակ, որ ստեղծագործաբար մշակեց անտիկ աշխարհի, արաբական և հայ ժողովրդական բժշկության ավանդույթները: Այս ամենը հայ բժշկապետին իրավամբ դասում է միջնադարի բժիշկների առաջին շարքը: Դեռևս 1908 թ. «Ջերմանց մխիթարութիւն» գիրքը գերմաներեն փայլուն թարգմանող և Հերացու ստեղծագործությունն առավել լուրջ ուսումնասիրող Էռնստ Ջայդելը հետևյալն է ասել հայ բժշկի մասին. «Երբ մենք, օրինակ, առանց կանխակալության համեմատենք Հիլդեգարդայի «Ֆիզիկան», որ գրվել է մի քանի տասնամյակ առաջ, մեր հայ վարպետի ստեղծագործության հետ, ապա մենք ստիպված կլինենք առաջնության դափնին վճռականապես շնորհել վերջինիս՝ բնությունը հիմնավորապես ճանաչելու, հետևողական և ինքնուրույն մտածողության, և սխուլաստիկ լծից կատարելապես զերծ լինելու համար»:

Հայ բժշկության Կիլիկյան դպրոցին էր պատկանում նաև բժիշկ Գրիգորիսը (ԺԳ դար), որի «Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց» երկը (Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր № 415) հստակ պատկերացում է տալիս Կիլիկյան Հայաստանում ախտաբանության և մահճաբուժության զարգացման մակարդակի մասին: Նրա գիրքը, որ գրված է վառ և պատկերավոր միջին հայերենով, հայ բժշկության մեջ շարունակեց Մխիթար Հերացու ավանդույթները: Մահճաբուժության հարուստ նյութերի և փորձի

ՄԱՐԻՒՆԻ ԱՐՏԵՐԱՅԵՐԻ ՅԵՐՈՍԵՒՄԻ ԿՈ

Երբ իջանք որ իմանեցաք թէ ինչ
 եղև իմաստութեան կարգակարգ
 րանեանց . կարգեցանք ինքս իմ
 րանացոց, կարգուանց, և կ'ընենացոց
 անեմք թէ ինքս որ անտապ ցոցն,
 պիտեմքն զարտեալ թէ ինչ . և և
 կարգուեալ ըստ անաշխն իմաստնացն
 այսինքն զնախապետութի որ իմաստ
 կարգուանութեան թէ ինչ կարգուան
 րանց . և ի հայր ընտանիքս զարտեա
 րանութի . կարգուան նախապետութեան
 այլ զատածութի ինչն կարգուան
 կարգի և ի այլ համարաւոր և ծաղկա
 քաղ : աստի կանախապետ . այլ
 և այլ պրզաց կանախ այլ այլա՞ծ :
 կանախայապետութեան կարգութեան

հիման վրա բժիշկ Գրիգորիսը հետազոտել է այն ժամանակ հայտնի բոլոր հիվանդությունների պատճառագիտության, ախտաբանության, մահճաբուժության հետ կապված հարցերը, առանձնապես մանրամասն կանգ առնելով տենդերի և ներքին օրգանների հիվանդությունների նկարագրության վրա: Բժիշկ Գրիգորիսի գրքում տեղ գտած կլինիկական մանրակրկիտ նկարագրությունները վկայում են, որ Կիլիկյան Հայաստանում իր հետագա զարգացումն է ապրել հիվանդանոցային գործը, որտեղ բժիշկները հնարավորություն են ունեցել հիվանդության ընթացքին հետևելու ուղղակի հիվանդի մահճակալի մոտ և ոչ թե բավարարվել միայն գրքերի տվյալներով: Այսպես՝ հայ պատմիչների վկայությամբ, Կիլիկիայում Ռուբինյանների օրոք բացվել են հիվանդանոցներ, բորոտանոցներ և ապաստարաններ: Այս ուղղությամբ հատկապես շատ բան են արել Լևոն Բ թագավորը (1185 — 1219 թթ.), նրա դուստրը՝ Զապել թագուհին, և Լևոն Գ թագավորը (1270 — 1289 թթ.): Այդ հիվանդանոցների հիման վրա ստեղծվեցին բժշկանոցներ, որոնք գլխավորում էին Կիլիկյան Հայաստանի խոշորագույն բժիշկները: Նրանցից մեկն էր և բժիշկ Գրիգորիսը, որ իր մեծ նախորդի նման կողմնակից էր հիվանդությունները փորձնական ճանապարհով ուսումնասիրելուն: Եվ թեև նա իր աշխատությունում ստիպված է եղել հաշվի նստել հումորալ պաթոլոգիայի անառարկելի հեղինակության հետ, այսուամենայնիվ Մխիթար Հերացու նման հաճախ հեռացել է նրա սխոլաստիկ պահանջներից, փորձելով ինքնուրույնաբար ըմբռնել և վերլուծել հիվանդությունների բնույթը:

Ջերմերի պատճառագիտության հարցում նա եղել է Հերացու հետևորդը՝ «բորբոսային» տեսությունը կիրառելով ոչ միայն «բորբոսային», այլև «հալևմաշ» ջերմերի վերաբերյալ, տարածելով այն նաև ներքին օրգանների՝ թոքերի, սրտի, լյարդի, ստամոքսի մի

շարք հիվանդությունների վրա: Մխիթար Հերացու նման Գրիգորիսը ևս ուսումնասիրել է տենդային հիվանդությունների հավավարակայնության հարցը, մանավանդ թոքախտի և բորոտության վարակիչ լինելը: Թոքախտի վերաբերյալ նա հետևյալն է գրել. «Թոքախտով հիվանդանում են 18-ից մինչև 35 տարեկանը, որովհետև այդ տարիքում մարդու բնությունը խիստ տաք է լինում, իսկ օրգանների՝ մանավանդ թոքերի, բնությունը մեղմ, և եթե բորբոսնում է թարախը, ապա այն արագորեն ախտահարում է թոքերը... Իմաստուն բժիշկներից առաջինները ասում են, որ այդ հիվանդությամբ վարակվում են նաև նրանք, ովքեր մերձենում են հիվանդին, նամանավանդ եթե ժամանակը ամառային է և սենյակը նեղվածք, վարակումը կախված է լինում նաև ծնողական ժառանգականությունից»:

Գրիգորիսը զարգացրել է նաև Հերացու մի այլ դրույթ՝ հիվանդ օրգանների անատոմիական կառուցվածքի ուսումնասիրության անհրաժեշտությունը, հանդիսանալով ախտաբանական անատոմիայի նախակարապետը միջնադարյան հայ բժշկության մեջ:

Թոքերի, սրտի, ստամոքսի և մի շարք այլ օրգանների հիվանդությունների նկարագրությունները «Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց» գրքում խոսում են այն մասին, որ Գրիգորիսը որոշ դեպքերում օգտվել է հիվանդների դիա-հերձումների տվյալներից, որը համընկնում է միջնադարյան Հայաստանում կատարվող դիահերձումների մասին մեր ունեցած տեղեկությունների հետ: Այսպես, թոքախտի պատկերը տալիս նա հիշատակում է թոքերում առաջացած «խուլլերի», «խոցերի» և «քարերի» մասին, այդ բառերի տակ հասկանալով թոքախտային հանգույցները, ինֆիլտրատները, կավեռնաները և կրակալման օջախները, որոնք այսօր լավ հայտնի են պաթոլոգ-անատոմներին:

Շատ հետաքրքրական են Գրիգորիսի պաթոլոգիական-

անատոմիական տվյալները թոքերի այլ հիվանդությունների վերաբերյալ (թոքաբորբ, թարախուտ, թոքերի էխինոկոկ) :

Գրիգորիսի «Քնութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց» երկի վերլուծությունը և նրա հրատարակությունը, որ իրականացրեց Ա. Կծոյանը 1962 թ., արժեքավոր ներդրում է հայ միջնադարյան բժշկության, հատկապես Կիլիկյան դպրոցի գիտական ժառանգության ուսումնասիրության գործում:

Հայ բժշկության մեջ մարդակազմության բարձր մակարդակը իր արտացոլումն է գտել Կիլիկյան Հայաստանում ԺԲ — ԺԳ դարերում գրված մի շարք երկերում: Մարդակազմության վերաբերյալ Մխիթար Հերացու աշխատությունների կողքին այստեղ ստեղծվել է նաև նրա ժամանակակից ասորի բժիշկ Աբուսայիդի «Յաղագս կազմութեան մարդոյ» երկը (Մաշտոցի անվան մատենադարանի ձեռ. № 549, 715, 4268 և այլն), որտեղ տրված է ուղեղի, զգայարանների, ներքին օրգանների, մկանային, ոսկրահոդային և սրտանոթային համակարգերի անատոմիան, ինչպես նաև հարուստ տեղեկություններ բնախոսության և ախտաբանության վերաբերյալ: Թեև Աբուսայիդի գիրքը գրված է արաբական բժշկության տիրապետության շրջանում, բայց այն տոգորված է անտիկ բժշկության դասականների՝ Հիպոկրատեսի, Արիստոտելի և Գաղիանոսի գաղափարներով: Դրա նախաբանում ասված է. «Հելլեն և հույն ընտրյալ փիլիսոփաները և բժշկական վարդապետները կատարյալ վարպետությամբ ճանաչեցին մարդու մարմնի բնությունը, նրա կառուցվածքը և գոյացումը, թե ինչպես առաջացան նրա ներքին օրգանները, ոսկրերը և հոդերը, և թե ինչ ընդհանրություն կա նրանց բնության և գործունեության միջև, և թե ինչպես են սնվում մարմնի բոլոր գործարանները, ինչպես նաև իմացան հիվանդությունների ընթացքը և դեղերի ներգործությունը: Եվ այս ամենի մասին գրեցին բժշկության մեծ իմաստուններ Գաղիանոսը,

Արիստոտելը և Հիպոկրատեսը»:

Այս խոսքերը վկայում են այն մասին, թե որքան կայուն էին հելլենական ավանդույթները հայ բժշկության մեջ:

Ինչ վերաբերում է Աբուսալիդի ասորական ծագմանը, ապա այդ մի արտասովոր երևույթ չէր Կիլիկյան Հայաստանի պայմաններում, որտեղ կողք-կողքի ապրել և գործել են հայերը, հույները, ասորիները: Հայ և ասորի բժիշկների գիտական կապերը, որոնց մասին մենք տեղեկություններ ունենք դեռևս ժ դարի վերջից, հատկապես ամրապնդվեցին ժԱ — ժԳ դարերում: Հայ միջնադարյան աղբյուրներում պահպանվել են նաև ազգությամբ ասորի ուրիշ բժիշկների անունները. որոնք գործել են հայ բժշկության անդաստանում, իրենց երկերը գրելով հայ ընթերցողի համար: Հիշենք նրանցից մի քանիսին Իշոխ («Գիրք ի վերայ բնութեան»), Աբուլ-Ֆառաջ, Խասնուկ, Ֆառաջ («Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ»): Նրանք բոլորն էլ ապրել են հայկական միջավայրում, իրենց երկերը շարադրել միջին հայերենով և սերտ, բարեկամական կապերի մեջ են եղել հայ մշակույթի գործիչների հետ: Աբուսալիդը Կիլիկյան Հայաստանում մեծ համբավ է վայելել ոչ միայն որպես բժիշկ, այլև որպես բազմակողմանի զարգացած, խոր գիտելիքների տեր անձնավորություն: Այսպես օրինակ, Ներսես Շնորհալին իր հռչակավոր «Ողբ Եդեսիոյ» պոեմը գրելիս նրանից տեղեկություններ է հարցրել Եդեսիա քաղաքի անվան ծագման մասին:

Կիլիկյան Հայաստանում ապրող ազգությամբ ասորի բժիշկների աշխատանքների շարքում յուրօրինակ տեղ է գրավում բժիշկ փիլիսոփա Իշոխի «Գիրք ի վերայ բնութեան» երկը, որի մեջ ընդհանրացված են ոչ միայն աստղագիտության, աշխարհագրության, եղանակաբանության, հանքաբանության և բուսաբանության հարցերը, այլև բնագիտության և բժշկության տվյալները: Այստեղ քննված են մարդակազմության, բնախոսույթ-

յան, սաղմնաբանության և բուսաբուծության հարցերը: Արժե նշել, որ մարդակազմության և բնախոսության վերաբերյալ նրա տվյալները շատ մոտ են այն տեղեկություններին, որ կան Գրիգոր Նյուսացու և Աբուսայիդի անատոմիական գրքերում: Ինչ վերաբերում է սաղմնաբանությանը, ապա այդ բաժնում նա քննում է բեղմնավորման, պտղի ձևավորման ու զարգացման հարցերը, ցուցաբերելով խոր գիտելիքներ: Այսպես, Իշոխը գրել է. «Առաջին օրը նախ և առաջ գոյանում է արյունը, ապա՝ սաղմը, որ 40 օր օժտված է լինում աճելու ուժով: Սկզբում առաջանում է գլուխը և աճում են ոտքերը, ապա աճում են նաև ձեռքերը, իսկ 50-րդ օրը առաջանում են աչքերը և բոլոր ներքին օրգանները... Երեք ամսվա ընթացքում սաղմը ձևավորվում և ստանում է իրեն հատուկ կերպարանքը»: Մարդու օրգանների և հյուսվածքների, ինչպես նաև սեռի առաջացումը Իշոխը կապում է 4 տարրերի հետ, բայց, չնայած սխուլաստիկ տեսության ճնշմանը, նրա մոտ զգացվում է ինքնուրույնաբար մտածելու և սեփական փորձի օգնությամբ սաղմնաբանական բարդ հարցերը ուսումնասիրելու ձգտում: Իշոխին զբաղեցրել է նաև չբերության պրոբլեմը: Նա շատ է խորհել այդ հիվանդության պատճառների մասին և ահա թե ինչ է գրում. «Չբերության շատ պատճառներ են լինում. կան կանայք, որ ի բնե զուրկ են արգանդից: Չբերությունը առաջանում է և հիվանդություններից, ինչպես նաև տղամարդու կամ կնոջ սեռական չափից դուրս սառնության պատճառով»: Իշոխի հայացքները այդ հարցում բավական մոտ են Իբն-Սինայի տեսակետին, որը երկու հարյուրամյակ առաջ գրել էր. «Այդ բնագավառում փորձեր և ուսումնասիրություններ կատարած մարդկանց հայացքներում ըստ էության տարաձայնություններ չկան: Յուրաքանչյուրը դատում է ըստ այնմ, նայած թե նա ինչ է հայտնագործել սեփական փորձի շնորհիվ»:

Բուսաբուծության տվյալները Իշոխը շարադրել է իր գրքի

բուսաբանության բաժնում: Այստեղ նա հիշատակել է 22 տեսակ բույս, որոնց մեծ մասը օժտված է բուժիչ հատկություններով և բնորոշ է Կիլիկյան Հայաստանի բուսական աշխարհին: Իշոխը նկարագրում է մանուշակի, նունուֆարի, նարդոսի, քրքումի, արմավենու, կաղնու, քաֆուրենու և խնկենու բուժիչ հատկությունները, որոնցից վերջին երկուսը այսօր էլ օգտագործվում են բժշկության մեջ: Դրանց հետ միասին «Գիրք ի վերայ բնութեան» երկի հեղինակը նշում է նաև շատ մրգերի և բանջարեղենների, ինչպես օրինակ՝ սերկևիլի, ընկույզի, խաղողի, թզի, սալորի, դդումի, ձիթապտղի, կոդա սեխի բուժիչ հատկությունները, որոնք լայնորեն կիրառվում են ժողովրդական բժշկության մեջ: Մաշտոցի անվան մատենադարանում այժմ կա Իշոխի «Գիրք ի վերայ բնութեան» տրակտատի 26 ընդօրինակություն (ձեռագիր № № 4268, 1751 և այլն): Այն միջնադարյան բժշկության մեջ վայելած իր համբավով մրցում էր Աբուսայիդի «Յաղագս կազմութեան մարդոյ» երկի հետ: Այս երկու նշանավոր հուշարձանների ռուսերեն թարգմանությունը, ուսումնասիրության մեջ հանդերձ, որոնք լույս տեսան 1974 և 1979 թվականներին, ավելի խորացրին մեր պատկերացումները Կիլիկյան բժշկական դպրոցի գիտական ժառանգության մասին:

Այս դպրոցի հետ սերտորեն առնչվում է նաև հայ բժիշկ Ահարոն Եդեսացու տոհմի բժշկական գործունեությունը, որի որդին՝ Ստեփանոսը, 1232 թ. ստեղծել է մի արժեքավոր գիրք-ծաղկաբաղ «Ծաղիկ» վերնագրով: Գրքի առաջաբանում Ստեփանոսը հետևյալն է գրում «Ես Ստեփանոս՝ որդի բժիշկ Ահարոնի Եդեսիա քաղաքից, որ այլ կերպ կոչվում է Ուռֆա, մեղավոր ծառա յաստուծո, շարադրեցի այն, որ շատերի հետազոտությամբ օգտակար է ճանաչվել, որ ես էլ ուսումնասիրել եմ իմ հոր և Մխիթար ու Սիմեոն բժիշկների մոտ... Եվ անվանեցինք մենք այս գիրքը «Ծաղիկ», քանի որ նա հանդիսանում

է մի ծաղկաքաղ անցյալի հմուտ բժիշկների բազմաթիվ գրքերից»։ Ստեփանոսի գիրքը, որի մեջ ամփոփված էին հայ ախտաբանության, մահճաբուժության և դեղագիտության տվյալները, բազմաթիվ այլ հայերեն ձեռագրերի հետ բարբարոսաբար ոչնչացվել է Թուրքիայում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, հայկական Մեծ եղեռնի ժամանակ։

ԺԳ — ԺԴ դարերում զգալի աշխուժություն է նկատվում նաև պատմական Հայաստանի բարձրագույն դպրոցների գործունեության մեջ։ Երզնկայում, Գլաձորում, Տաթևում, որտեղ դեռևս ուժեղ էին անտիկ գիտության ավանդները, ուսուցանում էին բնական գիտությունների հիմունքներ և բժշկություն։ Պետք է նշել, որ այդ շրջանում Քոնիի և Ծործորի բարձրագույն դպրոցներում, որոնք դարձան ունիթորական շարժման կենտրոններ, լատիներենից հայերեն են թարգմանվել միջնադարյան Եվրոպայի մի շարք ականավոր գիտնականների, այդ թվում նաև անվանի փիլիսոփա, բուսաբան, կենդանաբան և բժիշկ Ալբերտ Մեծի, ինչպես նաև Թովմա Ակվինացու աստվածաբանական և բնափիլիսոփայական երկերը։ Այդ թարգմանությունների շնորհիվ, որոնց մեջ Անաքսագորասի, Էմպեդոկլեսի, Պլատոնի և Արիստոտելի երկերից ծավալուն մեջբերումներ էին արվում, միջնադարյան հայ գիտության մեջ կրկին լցվում էր անտիկ աշխարհի կենարար շունչը Այսպիսով, թեև հայ ունիթորական գործիչների գաղափարաքաղաքական դրույթները հանդիպեցին պատմական Հայաստանի բարձրագույն և, առաջին հերթին, Գլաձորի և Տաթևի դպրոցների ականավոր գործիչների համառ դիմադրությանը, բայց այդ ամենովին չխանգարեց նրանց ուսումնասիրելու և գիտական լայն շրջանառության մեջ դնելու այնպիսի աշխատություններ, որոնք ստեղծվել էին հայ ունիթորներ Հովհաննես Քոնեցու, Հակոբ Քոնեցու, Հովհաննես Ծործորեցու և Եվրոպացի գիտնականների


Բարդուղիմեոս Մարաղացու, Հովհան Անգլիացու և Պետրոս Արագոնացու համագործակցությամբ:

Պատմական Հայաստանի դպրոցներից արժե հատկապես հիշատակել Տաթևի բարձրագույն դպրոցը, որի հետ սերտորեն կապված էր միջնադարյան Հայաստանի խոշորագույն մտածողների՝ Հովհաննես Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու (1346 — 1409 թթ.) գործունեությունը, որոնց երկերում քննվում են ոչ միայն փիլիսոփայության հիմնական խնդիրները, այլև բնագիտության և բժշկության հարցերը: Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցը» մի ծավալուն աշխատություն է՝ գրված 1389 թ. հարց ու պատասխանի ձևով: Հեղինակի մտքերը մարդակազմության, կենսաբանության, հոգեբանության և սաղմնաբանության վերաբերյալ շարադրված են հին և միջնադարյան հեղինակների՝ Պլատոնի, Արիստոտելի, Գրիգոր Նյուսացու և Նեմեսիոս Էմեսացու ոգով: Նկատելի է նաև, որ Տաթևացին քաջ ծանոթ է եղել Ալբերտ Մեծի աշխատություններին. «Գիրք հարցմանցում» հատկապես քննված է պատկերացուցության (ֆիզիոգնոմիկայի) ուսմունքը, որի նկատմամբ Տաթևացին ցուցաբերել է բննադատական վերաբերմունք և որը ժամանակին այնքան հետաքրքրել է նաև «Compedium theologicæ veritatis»-ի հեղինակին: Պատասխանելով «ճշմարտացի են արդյոք պատկերացուցիչ գծերը, արդյոք նրանք արտահայտում են մարդու բնավորությունը», Տաթևացին գրում է. «Մենք ասում ենք, որ նրանք ճշմարտացի չեն, ելնելով հետևյալ հինգ պատճառներից: Եւսիս և առաջ այդպիսի նշանները պարտադիր չեն մարդու համար, նրանք ցույց են տալիս, որ բնությունը որոշակի ձգտումներ ունի, և երբեմն նույնանման են րոլոր մարդկանց մոտ, երրորդ՝ քանի որ դրանք ցանկության դեպքում կարելի է ճնշել բանականությամբ, չորրորդ՝ այդ նշանները շատ դեպքերում լինում են պատահական և ոչ թե բնական, և,

հինգերորդ՝ քանի որ մարդ կարող է իր սովորության հակառակ, ժուժկալութամբ, աղոթքներով կամ իշխելով իր մարմնին՝ սանձել իրեն և չդրսևորել այդ հատկությունները: Այս ամենից ելնելով պետք չէ մարդկանց մասին վատ դատել, եթե նրանց մոտ առկա են նման նշաններ»:

Կիլիկյան Հայկական թագավորության կործանումը ժԳ դարի վերջին, ինչպես նաև ժԵ — ժԶ դարերի անընդհատ պատերազմները Օսմանյան Թուրքիայի և Պարսկաստանի միջև պատմական Հայաստանի հողերին տիրելու համար, պատճառ եղան հայ մշակույթի անկման: Այդ ծանր ժամանակներում Հայաստանում միայն մի քանի մշակութային կենտրոններում էին պահպանվում հայ դասական բժշկության ավանդույթները, որի վերջին պայծառ բռնկումը եղավ ժԵ դարի բժիշկ Ամիրդովլաթ Ամասիացու ստեղծագործությունը: Նա նախորդ շրջանի այն գործի շարունակողն ու զարգացնողն եղավ, որով, ըստ իր սեփական խոսքերի, «զբաղվել են մեր առաջին բժիշկները՝ Մեծ Մխիթարը, բժիշկ Ահարոնը, նրա որդին՝ բժիշկ Ստեփանոսը, և նրանց տոհմը, բժիշկ Ճոշիհնը, բժիշկ Սարգիսը, բժիշկ Դեղիհնը, բժիշկ Սիմավոնը, բժիշկ Վահրամը, որոնք շատ գրքեր են գրել դեղորայքների ներգործության ու օգտակարության մասին»:

Հայ բժշկապետը ծնվել է Փոքր Ասիայի Ամասիա քաղաքում, որ մեծ թվով հայ բնակչություն, դպրոցներ և եկեղեցիներ ուներ: Թեև նրա ծննդյան ստույգ թվականը հայտնի չէ, բայց հայ բժշկության պատմության գիտակները մի շարք կողմնակի տվյալների հիման վրա ենթադրում են, որ նա հավանաբար ծնվել է ժԵ դարի առաջին քառորդում: Դա քաղաքական փոթորկալից ցնցումների շրջան էր, երբ Հայաստանի արևմտյան նահանգներն ընկան թուրք-օսմանների տիրապետության տակ: Ամիրդովլաթ Ամասիացին ժամանակակից, գուցե և ականատես էր 1453 թ. Կոստանդնուպոլսի



ՈՒՍԻՆԻՆԿՈՒ-ԲԵԱՆՆԻԱՅՍ

Handwritten text in Armenian script, consisting of several lines of dense cursive script. The text is somewhat faded and difficult to read in detail, but appears to be a formal document or a page from a book.

Ամիրդովլաթ Ամասիացու «Ուսունն բժշկութան»
տիտղոսաթերթը (Մատենադարան, ձեռ. № 8871)

գրավմանը Մահմեդ Երկրորդի կողմից, քանի որ ժե դարի հիսունական թվականներին նա հայրենի քաղաքից տեղափոխվել և բնակություն էր հաստատել այս հռչակավոր մշակութային կենտրոնում, որտեղ և հավանաբար բժշկական դասընթացներն անցել է հմուտ բժիշկների մոտ: Քառորդ դար հետո՝ կյանքի մայրամուտին, Ամիրդովլաթը այդ մասին հետևյալն է գրել. «Ապա ես ճամփա ընկա թափառելու զանազան քաղաքներ, անցա ծովով, շրջեցի մակեդոնացվոց երկիրը և բնակություն հաստատեցի Կոստանդնուպոլսում»։ Այստեղ Ամիրդովլաթը շուտով լայն ճանաչում է ձեռք բերում իբրև բժիշկ և հրավիրվում է Մահմեդ Երկրորդ սուլթանի պալատը որպես նրա անձնական բժիշկ, ստանալով «Ճառահպաշի ըռամատանին» պատվավոր տիտղոսը, որ բառացի նշանակում է «գլխավոր վիրաբույժ-ակնաբույժ»:

Ամիրդովլաթ Ամասիացին արդեն փորձառու և լայն գիտելիքների տեր հասուն բժիշկ էր, երբ 1459 թ. Կոստանդնուպոլսում Շահի-բեկի որդի Վարդի խնդրանքով գրեց իր առաջին աշխատությունը «Ոսումն բժշկութեան» վերնագրով, որի մեջ անտիկ բժիշկների՝ Հիպոկրատեսի, Գաղիանոսի և արաբական բժշկության ճանաչված հեղինակությունների՝ Առ-Ռազիի և Իբն-Սինայի ոգով քննության են առնված սաղմնաբանության, մարդակազմության, բնախոսության, դեղագիտության, ախտաբանության և հիգիենայի հարցերը:

Բայց դրա հետ միասին Ամիրդովլաթ Ամասիացու «Ոսումն բժշկութեան» գրքում նկատելի է հեղինակի ձգտումը՝ վերանայելու հայ ժողովրդական բժշկության դարավոր փորձը դեղագիտության բնագավառում, որի նկատմամբ իր ստեղծագործական կյանքի ողջ ընթացքում մեր բժշկապետը խոր հետաքրքրություն է ցուցաբերել: Այդ հետաքրքրության վառ արտահայտությունն էր իր առաջին «Ախրապատինը», գրված նույն 1459 թվականին: Կարևոր է նշել

նաև, որ վաղ շրջանի իր այդ աշխատության մեջ նա փորձել է կազմել այսպես ասած «պարզ» և «բարդ» դեղամիջոցների բառարաններ, որոնցից հետագայում՝ գրեթե քառորդ դար անց, ստեղծվեցին նրա երկու ստվար աշխատությունները՝ երկրորդ «Ախրապատինը» և «Անգիտաց անպետը»: Անդրադառնալով առաջին «Ախրապատինին», որի ինքնագիրը այժմ պահվում է Մաշտոցի անվան մատենադարանում (ձեռագիր № 8871), պետք է նշել այդ գործի բացարձակ արժեքը հայ բժշկության պատմության համար: Իսկ «Ուսումն բժշկութեանը» հետագայում հիմնովին վերամշակվել է հեղինակի կողմից, հարստացվել նոր բաժիններով, որոնք նվիրված էին ախտաբանության և մահճաբուծության հարցերին: Այդ աշխատության կլինիկական մասի շարադրությունն ըստ նրանցին բավական երկար ժամանակ է պահանջել, այնպես որ Ամիրդովլաթի հետևյալ գիրքը՝ «Օգուտ բժշկութեան» վերնագրով, ավարտվել է 1469 թ. ֆիլիպոպոլ քաղաքում (այժմյան Պլովդիվ քաղաքը Բուլղարիայում): Այս աշխատության մեջ մանրամասն շարադրված են հեղինակի հայացքները բժշկության բոլոր հիմնական հարցերի մասին, ընդ որում զարմանք է պատճառում հայ բժշկապետի գիտական լայն աշխարհայացքը և նախորդ բժշկական գրականության (և անտիկ, և արաբական) խոր իմացությունը: Գրքի առաջաբանում Ամիրդովլաթը միջնադարյան հայ բժիշկներին հատուկ համեստությամբ հետևյալն է գրել. «Այն էլ իմացիր, եղբայր, որ այս գիրքը իմ խոսքը չէ, այլ հին իմաստունների և իմ սատուն բժիշկների և վերջին փիլիսոփաների և բոլոր բժիշկների խոսքն է՝ այն է Հիպոկրատեսի և Գաղիանոսի, և Արճիճանեսի, և Ֆլուսի, և Ռուֆոսի, և Դեճանիսի, և Մասրճուէի, և Հեսուի, և Մասուվայի որդու, և Ապուճարեհի, և Մասեհի, և Զաքարիայի որդու, և Սապիթ Կուռայի, և Հունանի, և Սինայի որդու, և Դիատողի, և Եհաննայի և շատ ուրիշների, որ այս գիտության ասպարեզում շատ են

աշխատել: Ես սրանց գրքերից եմ քաղել և գրել մեծ աշխատանք թափելով, իմ սեփական ձեռքով»:

«Օգուտ բժշկութեանը» գրված է իր ժամանակի լավագույն բժշկական երկերի մակարդակով և ընդհանրացնում է միջնադարյան հայ բժիշկների գիտելիքները բժշկության տեսական և գործնական հարցերի վերաբերյալ: Առավել ուրույն բնույթ է կրում նրա երկի մահճաբուժության բաժինը: Այստեղ սխտեմավորված ձևով տրված են ներքին օրգանների՝ ուղեղի, նյարդերի, զգայարանների, սրտի, շնչառական օրգանների, լյարդի, ստամոքսի, աղիների, փայծաղի, միզասեռական և այլ համակարգերի 200-ից ավելի հիվանդությունների, ինչպես նաև ջերմերի, բարորակ և չարորակ ուռուցքների, թունավորումների, մաշկային և այլ հիվանդությունների նկարագրությունները և դեղաբուժման սննդաբուժման մեթոդները:

Նրա կենսագրության այդ տասնամյա ժամանակաշրջանը, որի ընթացքում ստեղծվեցին մեծ բժշկապետի փորձն ընդհանրացնող այդ մեծարժեք երկերը, միաժամանակ հազեցած էր նրա անձնական կյանքում տեղի ունեցող դրամատիկ իրադարձություններով: Մի կողմից նա գնալով ավելի է ճանաչում ստանում որպես մարդասեր բժիշկ և տաղանդավոր գիտնական, իսկ մյուս կողմից քրիստոնյա բժիշկը նախանձ ու բացահայտ ատելություն է հարուցում իր թշնամիների մեջ, որոնք քիչ չէին մահմեդական տիրակալի պալատում: «Օգուտ բժշկութեան» գրքի նախաբանում Ամիրդովլաթը գրում է. «Շատ դժվարություններ ու փորձանքներ եմ քաշել անօրենների ու օտարազգիների, դատավորների, թագավորների և իշխանների երեսից: Երկար տարիներ պանդուխտ եմ եղել. տեսել եմ ժամանակի չարն ու բարին, փորձանքների եմ հանդիպել, հարստություն և աղքատություն եմ քաշել, թափառել եմ երկրից երկիր և իմ բժշկությունն եմ արել, շատ դեղ ու ճար եմ փորձել ըստ

իմ իմացածի, ծառայել եմ հիվանդներին՝ մեծամեծներին ու իշխաններին, հազարապետներին ու հարյուրապետներին, քաղաքացիներին ու աղքատներին, ծերերին ու մանուկներին...»:

Ստիպված լինելով հեռանալ մայրաքաղաքից, Ամիրդովլաթն անօգուտ չանցկացրեց արտաքսման տասը տարիները: Շարունակելով իր մարդասիրական պարտքը կատարել հիվանդների հանդեպ, հարձուստ լինել նա թե աղքատ, Ամիրդովլաթը միաժամանակ ծանոթանում էր այն երկրների դեղաբույսերի հետ, ուր նրան նետում էր բժիշկ պերիոդևտի ճակատագիրը, հաճախ փորձարարական հետազոտություններ կատարելով դեղաբուժության բնագավառում:

70-ական թվականներին Ամիրդովլաթը աքսորից վերադարձավ Կոստանդնուպոլիս և, դատելով ձեռագրական մի շարք տվյալներից, կրկին հաստատվեց սուլթանի անձնական բժշկի պատվավոր պաշտոնում: Այդ տարիներին որոշակիորեն դրսևորվեց նաև մեծ բժշկապետի սերը հայ մատենագրության նկատմամբ, հին աշխարհի բժիշկների և փիլիսոփաների ստեղծագործությունների նկատմամբ: Մի ժողովածուի (Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր № 1921) հիշատակարանում, որ պարունակում է Արիստոտելի փիլիսոփայական երկերը և Գրիգոր Տաթևացու մեկնությունները, գրիչ Անդրեասը հաղորդում է, որ այդ ձեռագիրը ընդօրինակված է 1492 թ. Ամասիայում բժիշկ Ամիրդովլաթի ցանկությամբ և համաձայնությամբ, ...որը ներկայումս իր գրասիրությամբ հանդիսանում է երկրորդ Պտղոմեոս»:

«Անգիտաց անպետ» գրքի հիշատակարանում, որն այսօր պահվում է Բրիտանական թանգարանում (ձեռագիր № 3712), նշված է Ամիրդովլաթի մահվան ստույգ թվականը՝ «Փոխեցավ ի Քրիստոս Ամիրդովլաթ բժիշկն թարգմանող գրոցս ի թվ. ՋԽԵ (1496), դեկտ. Ը (8), օրն հինգշաբթի»:

Իր կյանքի վերջին շրջանում նա ստեղծել է իր ամենանշանակալից աշխատությունները դեղագիտության վերաբերյալ «Ախրապատինը» (1481 թ.) և «Անգիտաց անպէտը» (1482 թ.): Նրանցից քիչ առաջ Ամիրդովլաթը գրել էր «Գիրք ռամկականը» (1474 թ.), որ իրավունք է տալիս Մխիթար Հերացու նման նրան ևս աստղաբաշխ կոչելու, հասկանալի է, այդ բառի միջնադարյան իմաստով, երբ հաճախ իրար էին հյուսվում աստղաբաշխություն և աստղագիտություն հասկացությունները:

Ամիրդովլաթ Ամասիացու ստեղծագործության հետազոտությունը ցույց է տալիս, որ թեև նա զբաղվել է գործնական վիրաբուժությամբ, հատկապես ակնաբուժության բնագավառում, բայց ամբողջությամբ վերցրած նա նախապատվությունը տալիս էր բուժման կոնսերվատիվ մեթոդներին (դեղաբուժություն, բուսաբուժություն, սննդաբուժում): Հարկավոր է նշել նաև, որ հայ բժշկապետի ինքնատիպությունը առավել որոշակի հանդես է գալիս դեղագիտության բնագավառում, որտեղ նա ի մի է բերել ժողովրդական բժիշկների և դասական բժշկության ներկայացուցիչների դարավոր փորձը:

Ամիրդովլաթի «Անգիտաց անպէտը», որ հանդիսանում է միջնադարյան հայկական դեղագիտության հանրագիտարան (ըստ որում դեղանունները տրված են հինգ լեզուներով՝ հայերեն, հունարեն, լատիներեն, արաբերեն և պարսկերեն), պարունակում է 3500-ից ավելի բուժիչ բույսերի, կենդանիների և հանքային նյութերի անվանումներ և նրանց հոմանիշները, իրավամբ համարվում է հայկական բժշկության գագաթը: Այդ գործի հետազոտությունը արդի բժիշկներին հնարավորություն է տալիս ծանոթանալու միջնադարյան հայ բժշկության դեղամիջոցների և առաջին հերթին բուսաբուժության հետ, որ նրա ամենակարևոր բնագավառն էր: Պարզվում է, որ այն բոլոր հիվանդությունների բուժման համար,



Միջնադարյան բուսաբուծության մեջ կիրառվող դեղաբույսեր, վերևում՝ փաղարիկ *Phalaris tyberosa* L., ներքևում՝ դաղձի տեսակներ (*Mentha* L)
(Մատենադարան, ձեռ. № 6594)

որոնց առաջացման մեջ, այսօրվա տվյալներով, որոշակի դեր ունի վարակիչ-ալերգիկ գործոնը, Ամիրդովլաթ Ամասիացին օգտագործել է մի շարք բույսեր, դրանք են կոծծուկը, կղմուխը, երիցուկը, բարձվենյակը, մշտիկը, ուրցը, խնկեղեգը, սև գնդիկը, տատաշը, քարասերմիկը, որոնք հատուկ են Հայաստանի բուսական աշխարհին: Այս բոլոր բույսերը հարուստ են եթերային յուղերով, վիտամիններով, բուսական հորմոններով և այլ ակտիվ նյութերով, որոնցով էլ պայմանավորված է նրանց բուժիչ ներգործությունը: Նույն փորձնական ճանապարհով էլ հայ բժշկապետը պարզել է մարգացնծուկի, երնջակի, կուսածաղկի, արևադարձի, սորնջանի և որոշ այլ բույսերի հակաուռուցքային հատկությունները, բույսեր, որ այսօրվա տվյալներով պարունակում են կոմարինի և ֆուրոկոմարինի ածանցյալներ, ինչպես նաև կոլխիցին և վինբլաստին ալկալոիդներ, որոնք օժտված են հակաուռուցքային ներգործությամբ: Ամիրդովլաթը մեծ նշանակություն էր տալիս նաև այն բույսերին, որոնք օժտված են հակաթունային (նարդոս, վաղենակ, երկաթախոտ) և տոնուսը բարձրացնող (սղանգ, լոշտակ) հատկություններով, որոնք նա միաժամանակ օգտագործել է որպես վաղաժամ ծերությունը կանխող և առողջությունն ու երիտասարդությունը պահպանելուն նպաստող հակասկլերոտիկ միջոցներ: Նույն նպատակով նա կիրառում էր որոշ բուսական, կենդանական և անօրգանական ծագում ունեցող խեժեր (քաղբանը, սեքպինաճը, անգուժատը, ակնամոմը և այլն): Մարմնի տոնուսը բարձրացնելու, վերքերը ապաքինելու և ուռուցքները բուժելու համար Ամիրդովլաթը խորհուրդ է տալիս օգտագործել մումիան, բարդ բնական միացություն, որը գոյացել է բույսերի մնացորդներից, կենդանիների աղբից և ածխաջրածինների քայքայումից տարբեր երկրների քարայրներում (Պարսկաստան, Աֆղանստան, Միջին Ասիա): «Անգիտաց անպետ»-ում կան տեղեկութ-

յուններ մուսիայի արդյունահանման մասին բուն Հայաստանում

«Գրքիս հեղինակը ասում է, որ գոյություն ունեն 10 մերձակա քարայրներ, ուր պեղում են մուսիա: Եվ սրանք 10 անուն են կրում»: Թեպետ նա չի հայտնում այդ անունները, սակայն մուսիայի հայտնագործումը արդի Հայաստանի բնաշխարհում (Եղեգնաձորի քարայրներ) հաստատում է միջնադարյան հայ բժշկապետի ասածը:


Հայկական դեղամիջոցների այս վիթխարի քանակը ազատորեն և նպատակին օգտագործելու համար հարկավոր էին ոչ միայն բժշկի մեծ փորձ և խորը իմացություններ, այլև բուսաբանի, կենդանաբանի և քիմիկոսի լայն գիտելիքներ: Այս բոլոր հատկություններով ներդաշնակորեն օժտված էր Ամիրդովլաթ Ամասիացին, որն իր նշանակալի ավանդն է մուծել միջնադարյան բժշկության գանձարանը, ստեղծելով բժշկագիտական երկերի մի ամբողջ գրադարան, գրված ժողովրդին մատչելի միջին հայերենով, յուտ Մխիթար Հերացու ավանդույթի. և որոնք գրեթե բոլորը լուրեբախտաբար պահպանվել են մինչև մեր օրերը:

Այսպիսով հայ բժշկապետի երկարատև օգտակար կյանքը հագեցած է եղել բժշկական սխրանքով և նվիրվածությամբ, նևտազոտություններով և դեղամիջոցների որոնումներով, ճանապարհորդությամբ ու փրկելով և գրքեր ստեղծելով: Բազմակողմանի ընդունակությունների տեր Ամիրդովլաթն օժտված էր նաև բանաստեղծական ձիրքով, որ իր արտահայտությունն է գտել նշված երկերում շռայլորեն շաղ տված ասույթներում և բանաստեղծություններում: Բժշկի պարտքի խոր գիտակցությամբ, բարոյագիտական բարձր պահանջներով են տոգորված Ամիրդովլաթի աշխատությունները: Նա հաճախ կանգ է առնում բժշկի բարոյական նկարագրի վրա. «Բժիշկը պետք է օժտված լինի բանականությամբ և պարտքի գիտակցությամբ: Ոչ մի դեպքում նա

չպետք է լինի գինեմուլ, ագահ և շահախնդիր: Նա պարտավոր է սիրել աղքատներին, լինել գթառատ, նվիրված, աստվածավախ, բարոյապես մաքուր: Եթե նա չի կարողանում հասկանալ հիվանդության էությունը, ապա պետք չէ որ դեղ տա հիվանդին, որպեսզի չարատավորի իր անունը: Իսկ եթե նա անգետ է, ապա ավելի լավ է նրան չհրավիրել հիվանդի մոտ և ընդհանրապես նրան բժշկ չհամարել»: Այս պահանջներից շատերը ժամանակին ձևակերպել է դեռ անտիկ բժշկության հայրը՝ Հիպոկրատեսը:

Բոլոր մեծ բժիշկների նման Ամիրդովլաթը մենակ չէր գիտության մեջ: Նա ստեղծեց հայ բուսաբույժ բժիշկների մի ամբողջ դպրոց, որ գոյատևեց մի քանի դար շարունակ և որի ազդեցության հետքերը նշմարվում են Սեբաստիայի բժշկական դպրոցի ներկայացուցիչների՝ Հովասափ, Ասար և Բունիաթ Սեբաստացիների երկերում: Ամիրդովլաթ Ամասիացու գրքերը, որոնց մեջ, ինչպես և Իբն-Սինայի «Կանոնում», ներկայացված են բժշկության գրեթե բոլոր կարևոր բաժինները՝ սաղմնաբանությունը, մարդակազմությունը, բնախոսությունը, մահճաբուժությունը, դեղագիտությունը, վիրաբուժությունը և թերապիան, դարեր շարունակ հանդիսացել են բժշկական գիտելիքների հանրագիտարան: Աշխարհով մեկ ցրված նրանց բազմաթիվ ձեռագիր ընդօրինակությունները խոսում են այն մեծ հետաքրքրության մասին, որ ցուցաբերել են միջնադարյան հայ բժիշկները Ամիրդովլաթ Ամասիացու ստեղծագործության նկատմամբ:

Ինչպես վերը նշեցինք, Ամիրդովլաթ Ամասիացու ավանդույթները որոշակի ազդեցություն են գործել Սեբաստիո հայ բժշկական դպրոցի ներկայացուցիչների վրա, որոնք, սեփական երկեր ստեղծելուց բացի, մեծ ուշադրություն են դարձրել նաև Ամիրդովլաթի ստեղծագործությունները խմբագրելու և մեկնաբանելու վրա: Այսպես, Ասար Սեբաստացին 1614 թ. գրում է «Գիրք



Մխիթար Հերացի և Ներսես Շնորհալի
(Մատենադարան, ձեռ №7046)

բժշկական արհեստի», որին կցված է նաև բժշկական բառարան հինգ լեզվով: Այդ գիրքը հետաքրքրական է նաև նրանով, որ այստեղ բերված են ընդարձակ քաղվածքներ Մխիթար Հերացու և այլ բժիշկների կորած աշխատություններից: Իսկ 1625 թ. խմբագրելով Աբուսայիդի «Մարդակազմութիւնը», Ասար Սեբաստացին նրա մեջ մուծել է աչքի կազմության մասին մի հատված հայ բժշկապետի այժմ կորած աշխատությունից, որ վերաբերում է ակնաբուժությանը:

Նույնքան բեղմնավոր է եղել նաև Սեբաստիո դպրոցի մի այլ ներկայացուցչի՝ Ասարի ժամանակակից Բունիաթ Սեբաստացու գործունեությունը: 1626 թ. Մարզվանում նա խմբագրել է Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» գիրքը, որի ձեռագիր ընդօրինակությունը (Մատենադարան, № 414) հիմք հանդիսացավ նրա քննական հրատարակության համար, որ լույս ընծայեց 1940 թ. Ստ. Մալխասյանցը:

Այս գրքի ոգով տարիներ հետո Բունիաթ Սեբաստացին ընդհանրացրեց իր սեփական փորձը, Սամսունում գրած «Գիրք բժշկական տումարի» մեջ, որի համար, իր խոսքերով ասած, Ամիրդովլաթի նման հավաքել և ուսումնասիրել է օտար և հայ հեղինակների բազմաթիվ ստեղծագործություններ: 1632 թ. Բունիաթ Սեբաստացին խմբագրում է նաև Ամիրդովլաթի «Անգիտաց անպետը», որի քննական բնագիրը 1926 թ. լույս ընծայեց Կ. Բասմաջյանը:

Սեբաստիո դպրոցի բժիշկների գործունեությամբ ավարտվում է հայ միջնադարյան բժշկության զարգացման վերջին շրջանը: Թեև ընդհուպ մինչև ԺԸ դարի առաջին կեսը և նույնիսկ ավելի ուշ առանձին հեղինակներ Ամիրդովլաթ Ամասիացու և Մխիթար Հերացու ավանդույթներով ստեղծում են իրենց երկերը, բայց միջնադարյան հայ բժշկության այդ վերջին մոհիկանները այլևս

չէին կարող դեմ կանգնել նորագույն բժշկության ճնշմանը:

ԺԸ դարի երկրորդ կեսից սկսած հանդես են գալիս Եվրոպայի և Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթությունն ստացած հայ բժիշկներ, որոնցից արժե հիշատակել Պ. Քալանթարյանի, Ս. Շահիրիմանյանի, Հ. Օղուլլուղյանի, Մ. Ռեստե- նի անունները: Միաժամանակ հայերեն են թարգմանվում ռուս և եվրոպացի հեղինակների գործերը, այդ թվում նաև Ն. Մաքսիմովիչ- Ամրոդիկի (1744 — 1812 թթ.) «Բժշկարան կամ բժշկության մեջ օգտագործվող բուժիչ բույսերի նկարագրություն» գիրքը թարգմանված դեռևս հեղինակի կենդանության օրոք (Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր № 9285): Հարկ է նշել, որ հայ բժիշկները հաճախ եվրոպական գիտության տվյալները համադրում էին հայ ավանդական բժշկության հարուստ փորձի հետ: Այդ առումով առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում Պետրոս Քալանթարյանի բժշկարանը: Նա ծնվել է 1735 թ. Նոր Ջուղայում, այնուհետև տեղափոխվել է Ռուսաստան, որտեղ և ընթացել է նրա բժշկական և գիտական գործունեությունը: Իր «Բժշկարանի» նախաբանում, որ տպագրվել է 1793 թ. Դոնի Նախիջևանում, նա խնդրում է հիշել «համեստ բժիշկ Պետրոս Ջուղայեցուն, Հովհաննես Քալանթարյանի որդուն, որն այժմ բնակ- վում է Ռուսիո մայրաքաղաք Մոսկվայում»: Նրա գիրքը նվիրված է վարակիչ, ալերգիկ, մաշկային, հոգեկան, նյարդային և մի շարք այլ հիվանդությունների բուժման հարցերին, ընդ որում եվրոպական բժշկության մեջ գործածվող դեղամիջոցներից բացի, Պետրոս Քալանթարյանն առաջարկում է նաև մի շարք բուժիչ միջոցներ, որոնք լայն կիրառություն են ունեցել հայ միջնադարյան բժշկու- յան մեջ: Հատկապես նա մեծ տեղ է տալիս քար մաշեցնող (լիտոլիտիկ) միջոցներին, որոնք հանդիպում են Ամիրդովլաթ

Ամասիացու աշխատություններում: Պետրոս Քալանթարյանի «Բժշկարանը» նույնպես վերջում ունի բժշկական տերմինների բառարան, ընդ որում դեղամիջոցների անունները տրված են ոչ միայն լատիներեն և հայերեն, այլև հունարեն, արաբերեն, պարսկերեն և ռուսերեն լեզուներով:

Ամիրդովլաթ Ամասիացու ավանդույթների խոր ազդեցությունը զգացվում է նաև մի ուրիշ հայ անվանի բժիշկ և բուսաբան Ստեփաննոս Շահրիմանյանի (1766 — 1830 թթ.) ստեղծագործություններում, որը թեև կրթությունն ստացել է Եվրոպայում, բայց բժշկական գործունեությունը հիմնականում ծավալել է Կովկասում, հատկապես Թիֆլիսում, որը դարձավ հայ մշակութային կյանքի խոշորագույն կենտրոններից մեկը: Այստեղ է, որ նա 1794 — 1818 թվականներին գրում է իր «Տնկաբանութիւն կամ փղորայ Հայաստանի» ծավալուն աշխատությունը, որը դժբախտաբար դեռևս մնում է անտիպ: Հիշյալ աշխատության ձեռագիր ընդօրինակությունները, որոնք այսօր պահվում են Մաշտոցի անվան մատենադարանում (ձեռագիր №№ 6267, 9856 և այլն), մեզ պատկերացում են տալիս այն մանրակրկիտ, ժրաջան աշխատանքի մասին, որ գրեթե քառորդ դար շարունակ նա թափել է իր գրքի վրա: Գրքում նկարագրված են Հայաստանի դեղաբույսերը, ընդ որում հեղինակը լայնորեն օգտագործել է հայ միջնադարյան բուսաբուժության, ինչպես նաև Ամիրդովլաթ Ամասիացու տվյալները:

Ստեփաննոս Շահրիմանյանի գրչին է պատկանում նաև ժանտախտի դեղային բուժման հարցերին նվիրված մի աշխատություն, որ նա գրել է 1796 թ. Կոստանդնուպոլսում, որտեղ այդ ժամանակ մուլեգնում էր ժանտախտի համաճարակը: Անհրաժեշտ է նշել, որ հայ բժիշկները Մխիթար Հերացուց սկսած միշտ էլ մեծ հետաքրքրություն են ցուցաբերել ինչպես ժանտախտի, այնպես էլ վարակիչ այլ հիվանդությունների պատճառագիտության և բուժ-

Տ Կ Կ Ա Բ Ա Կ Ն Ո Ի Թ Ի Ի Կ,

Կ Ա Մ

Փ Ն Ո Ր Ա Յ Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի

Որ ճարտգրանից աստիպանուց վերտեղացի է հայրենի մեր
և ի յայլ ի ղ ճանաչող զարգրի զատրիւր ատմութեան Երեւանի նորին
հիւրեւան յանձնեց ընտրել հայրենի փոխառուութեան
առիարեւի քան զուստ ազան հայրենական օտարութեան քան զուստ
դարձան անհոգ անարգ արագութեան վաղեմի և արդի սովորութեան
և նուստ հոգութիւն ի զար հայրենասիրութեան հայրենից ի ղ ղ

Յատուր և ընտրել զանոն ին յատեն մայր տնիւր անոն ին
արարացի սարսափական և անհասկանալի ստիպան զհանրա-
թեան իւրեանց անհիմար արդարաւ յառ ընտրել: Նուստ
բան ընտրել զնորոնց և նիարանարար և զան մասանց ընտրել
աւանդեալ զհանցի զտուրի ստիպան բուստան, և անան
նո Ուստ ցանկ զարդարիս զարժանութի յայտել զհան-
տատութի ստիպել զհոգաւոր ասայլ նորին ընտրանաւ ան-
հիւստ և անար հանգանաւ ի ղ ղ հայրենի ստիպան և անարժեք

Եւ ի վերջոյ երիտարարութեան տնիւր անհասկանալի ստիպան
ստիպել ի ղ ղ զարդարիս զարժանութի
' Ի հայրենի տեղէն անհոգ և անարժեք ի ղ ղ հայրենի ստիպան
անարժեք և անար հանգանաւ ի ղ ղ հայրենի ստիպան և անարժեք

Ինչպէս ինչպէս զարդարիս զարժանութի
անհոգ և անարժեք ի ղ ղ հայրենի ստիպան
և անար հանգանաւ ի ղ ղ հայրենի ստիպան և անարժեք

Աստիպանուց զան և զոր անհոգ և անարժեք ի ղ ղ հայրենի ստիպան
և անար հանգանաւ ի ղ ղ հայրենի ստիպան և անարժեք
աստիպանութի զատու ստիպել ի ղ ղ հայրենի ստիպան և անարժեք

Եւստիպան և անարժեք ի ղ ղ հայրենի ստիպան
Յատի անհոգ 1918. Դեկտեմբեր 20
Իսկ ի թուականութի հայրենի ստիպան և անարժեք

' Ի Տ Փ Ի Ի Ս,

Ստեփաննոս Շահրիմանյանի «Տնայաբանութիւն կամ փոքրայ
Հայաստանի» գրքի տիտղոսաթերթը (Մատենադարան, ձեռ
№ 6267)

ման հարցերի նկատմամբ: Ի շարս Ստ. Շահրիմանյանի առաջարկած դեղամիջոցների նշված է նաև հայկավը, որը ժողովրդական բժշկության սիրված միջոցներից մեկն է: Դրա հետ միասին Ստ. Շահրիմանյանի ստեղծագործություններից պարզ երևում է, որ նա լավ ծանոթ էր եվրոպական նորագույն բժշկության և բուսաբանության նվաճումների և բուսական աշախարհի՝ Կարլ Լիննեյի դասակարգման հետ: Այս ամենը իր վառ արտացոլումն է գտել նաև ժԸ — ժԹ դդ. մի ուրիշ հայ բժշկի՝ Միքայել Ռեստենի ստեղծագործության մեջ: Մ. Ռեստենը հեղինակ է «Գիրք բժշկութեան» և «Կրթութիւն բժշկական արուեստի» երկերի (վերջինիս գլուխներից մեկը վերնագրված է՝ «Նոր գիտք արդի բժշկաց ի վերայ բժշկութեան»):

ԺԹ դարի երկրորդ կեսին հանդես են գալիս տաղանդավոր բժիշկների մի ամբողջ համաստեղություն՝ Մարգար Առուստամյան (1854 — 1901), Վահան Արծրունի (1857 — 1947), Հարություն Միրզա-Ավագյան (1879 — 1938), Լևոն Հովհաննիսյան (1885 — 1970) և շատ ուրիշներ, որոնք հանդիսացան հայ բժշկության հին բնագավառների բարեփոխողներ և նոր բնագավառների հիմնադիրներ: Ա. Քեչեկի, Ա. Մելիք-Ադամյանի, Գ. Արեշյանի, Հ. Գաբրիելյանի և ուրիշ ականավոր գիտնականների անունների հետ է կապված արդի հայ բժշկության մի շարք կարևորագույն բնագավառների՝ վիրաբուժության, թերապիայի, մանկաբարձության, մանկաբուժության զարգացումը: Նրանց ջանքերով սկիզբ դրվեց Հայաստանի բժշկության վերածննդին, որը, յուրացնելով հին և միջնադարյան բժշկության հարուստ ավանդույթները, զգալի գործ կատարեց հիվանդությունների բուժման և կանխարգելման գործում, ի սպառ վերացնելով մի շարք վարակիչ հիվանդություններ, որոնք առաջ երկրամասային ախտաբանության դրսևորումներ էին: Հայ ժողովրդական և դասական բժշկության վիթխարի փորձը բուսաբուժության բնագավառում ուշադրության արժանացավ և ուսումնա-

սիրվեց այնպիսի խոշոր մասնագետների կողմից, ինչպիսիք են Հ. Սեպետճյանը, Ս. Միրզոյանը, Ս. Զուլտոնիցկայան և ուրիշներ, հանդիսանալով անսպառ գանձարան հանրապետության դեղագործական արտադրության համար:

Ժամանակակից բժշկությունը այսօր ավելի հաճախ է դիմում հայ ավանդական բժշկության հարուստ փորձին՝ օգտվելով ինչպես գրավոր աղբյուրներից՝ միջնադարյան հայ բժշկապետների աշխատություններից, այնպես էլ ժողովրդական բուժականների բանավոր ավանդույթներից: Հետևաբար հայ բժշկության բազմադարյան հարուստ փորձը ոչ միայն զուտ պատմական նշանակություն ունի, այլև գործնական արժեք է ներկայացնում մի շարք հիվանդություններ՝ այն է չարորակ ուռուցք, աթերոսկլերոզ, հոգեկան խանգարումներ և ալերգիկ հիվանդություններ բուժելու համար, որոնց պրոբլեմը արդի գիտության մեջ դեռևս լուծված չէ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- 1 Ամիրդովլար Ամասիացի, Օգուտ բժշկութեան, խմբ. Ս. Մալխասյանցի, Երևան, 1940:
- 2 Ամիրդովլար Ամասիացի, Անգիտաց անպետ, խմբ. Կ. Բասմաջյանի, Վիեննա, 1926:
- 3 Աբուալիդ, Յաղագս կազմութեան մարդոյ, աշխ. Ս. Վարդանյանի, Երևան, 1974:
- 4 Գրիգոր Մագիստրոսի թղթերը, աշխ. Կ. Կոստանեանցի, Աղեքսանդրապոլ, 1910:
- 5 Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց, աշխ. Ա. Կժոյանի, Երևան, 1962.
- 6 Դաւիթ Անյաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, համահաւաք բնագրերը և առաջաբանը Ս. Աբեշատյանի, Երևան, 1980
- 7 Եզնկայ Կողբացոյ, Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:
- 8 Բշօխ, Գիրք ի վերայ բնութեան, աշխ. Ս. Վարդանյանի, Երևան, 1979:
- 9 Մխիթարայ բժշկապետի Հերացոյ ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832.
- 10 Նեմեսիոսի փիլիսոփայի Եմեսուցոյ, Յաղագս բնութեան մարդոյ, Վենետիկ, 1882:
- 11 Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ, աշխ. Բ. Չուգասցյանի, Երևան, 1980
- 12 Mechithar's des Meisteraztes aus Her «Trost bei Fiebern» aus den Mittelarmenischen übersetzt von D-r med. Ernst Seidel, Leipzig, 1908.
13. Мхитар Гераци, Утешение при лихорадках, под. ред Л Оганесяна, Ереван, 1955
- 14 Л Оганесян, История медицины в Армении, тт 1—V, Ереван. 1946—48

**ՍՏԵԼԼԱ ԱՐՄԵՆԱԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԸ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

СТЕЛЛА АРМЕНАКОВНА ВАРДАНЯН

**МЕДИЦИНА В ДРЕВНЕЙ И СРЕДНЕВЕКОВОЙ
АРМЕНИИ**

(На армянском языке)

Издательство «Советакан ցрох»

Ереван, 1982

Խմբագիր՝ Լ. Լ. Սիմոնյան

Նկարիչ՝ Ջ. Գ. Աֆրիկյան

Գեղ. խմբագիր՝ Օգ. Ա. Ասատրյան

Տեխ. խմբագիր՝ Ս. Գ. Շահվերդյան

Վերստուգող սրբագրիչ՝ Ե. Վ. Ազատյան

ИБ 3844

Հանձնված է շարվածքի 13.04.82: Ստորագրված է տպագրության 19.09.82: ԿՑ 09064: Ֆորմատ 70X1081/32 թուղթ տպագր. օֆսեթ: Տառատեսակ՝ Արարատ: Տպագրություն օֆսեթ. 2,62. պայմ. տպ. մամ., 20 հրատ. մամ.: Տպաքանակ 30.000: Պատվեր 1178: Գինը՝ 15 կոպ.

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան — 9, Տերյան 91:

Издательство «Советакан грох», Ереван—9, ул Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի գունավոր տպագրության տպարան, Երևան — 82, Էջմիածնի խճուղի 48:

Типография цветной печати Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР. Ереван — 82, Эчмиадзинское шоссе, 48.

